


428

թեմատիկ

253



N 25

ԳԵՂՐԳ ԶՈՒԲԱՐ.

Հայոց Թրամադրական պատճեններ
Հայոց Թրամադրական պատճեններ

1890.

ՀԱՅՈ

ՊԱՏԿԵՐ

Աթելական հայոց գրքեալիւն եկ Պատրիարք Ժողովածութիւն

N 243

(Փ)

2821

1152.

ՄՈՍԿՈՒԱ

ԶՈՒԲԱՐԻՆ եկ ՏՊԱՐԱՆ Օ. Օ. ՀԵՐԱԿ.

1889.

Տ. Ա. ՀԱՅԱՍՏԱՆ Վ 2054

ԳԵՂՈՐԳ ԶՈՒԲԵԱՐ.

891.99
—
9-81
48.

Հ Ա Ս Ո

Պ Ա Տ Կ Ե Ր

ԱՐՏԱՏՊԱԺ, „ՀԵՆԴԻԼՍ ԴՐԱԿԱՆՆԱՎԵՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ“ ԺՈՂՈՎԵՖՈՒԻՑ

(Փ)

03-ԽԽ02

Մ Ո Ս Կ Ո Ւ Ա

ԶՈՒԼԱՐԱՆ ԵԽ ՏՊԱՐԱՆ Օ. Օ. ՀԵՐԱՔ.

1889.

2004

ԱՐԱՐՈՅ ՔՎԱՐ

23944-4.3

ՕՍԽՀ

Дозволено цензурою. С.-Петербургъ, 28 Октября 1889 г.



(5044-50)
253 - 2014

կթ 252

1881

Հ Ա Ս 0

պատկեր

(Կուէր իմ վաղամեռ լնկեր Դէորդ Պապուլեանցի անմոռաց յիշատակին).

I.

Կար մի՞թէ մէկը ամբողջ Դ. գիւղում, որ չճանաչէր Հասոյին, այդ շարաձճի Սամօնց Հասոյին. երբէք: Ամբողջ գիւղը ճանաչում էր այդ «աստանի պոչ» Հասոյին, ճանաչում էր նրան մանկութիւնից. ամենին ծանօթ էր այդ բարձրահասակ, վայելսակազմ, առոյդ պատանին. իսկ նրա թուխ, արևառ, նուրբ և գեղեցիկ գծագրած երեսը, նրա խոշոր, սեղակ, լայն թէրթերուկներով պատած աչքերը, նրա խիտ մազերը, նրա կէս հպարտ, կէս հեգնական ժամանը, որ միշտ խաղում էր նրա նեղ շրթունքների ծալքերում, նրա գոռող, հրամայողական հայեացքը և վերջապէս նրա մաշուած, անգունացած արխալուղը և մորթեայ քօլողը, որ նա կրում էր մի ճիշտ իշխանական հպարտութեամբ,— ոօ, դա մի այնպիսի սովորական, առօրեայ մանրամասնութիւններ էին, առանց որոնց Դ.—եցին անկարող էր երեսակայել իրեն Սամօնց Հասոյին: Այն, այդպէս էր Հասօն և ճիշտ այդպէս ճանաչում էին Հասոյին Դ.—եցիք համարեա այն օրից, երբ նա փոքրիկ, փողոցում ընկած լակոտից դարձաւ արդէն հասունացած 11 տարեկան պատանի:

Եւ գեռ ոչինչ ոչ մի կենսական երեսիթ, չէր վրդովել Հասոյի հոգու խաղաղ պատանեկան անգորլութիւնը, ամեն ինչ այնտեղ գեռ լուռ էր և քնած: Հասօն դեռ շատ քիչ էր շփուել արտաքին կեանքի և նրա մութ, տգեղ

կողմերի հետ։ Այն աշխարհը, ուր ապրում էր մինչև այժմ Հասօն, շատ նեղ և սահմանափակ էր, թէև զեղեցիկ և հրապուրի։ Նա գիտէր միայն իւր զիւղը, իւր շրջակայ ապառաժոտ, ամպամած սարերը, ծերացած, խոժոռուած վեթխարի ժայռերը, կարծես, անվերջ, անծայր, միշտ մութ, միշտ խորհրդաւոր լուս. անտառը, գիտէր կատաղի հոսանքով սարերից ցայտող ջրվէժները, զիտէր պարզ աղբիւրի անվերջ, միատեսակ խուլ մրմոնջը, կիղեւ արեւի թմբեցնող տաք ձառագայթները և հարաւի, այդ հրաշալի հարաւի գիշերային մութ-կապուտակ, կարծես, զմբուխաեայ երկինքը իւր անհամար վառվուռն աստղերով և իւր լուսնի մեղմ, փայփայող սպիտակ լուսով։ Այդ ամենը գիտէր և ձանաչում էր Հասօն։ Համարեա նոյն իսկ օրօրոցից հարաւային կուսական շքեղ բնութեան պատկերը խոր տպաւորուել էր նրա սրտում։ Այդ բնութեան ծոցում անց էր կացլել նա իւր ամբողջ կեանքը. այդ բնութիւնը և ինքը Հասօն, նրա նեղքին «եաը այնպիսի սերտ կապիլով էին կապուած միմեանց հետ, որ, կարծես, լրացնում էին փոխադարձաբար միմեանց գրյութիւնը աշխարհային ներդաշնակ կազմակերպութեան մէջ։ Եւ ի՞նչպէս կարող էր լինիլ այլապէս։ Հասօն բնութեան, պարզ բնութեան հարազատ որդին էր. նա Դ. գիւղի խանարածն էր։ Ահա ամբողջ 10 տարի է, ինչպէս նա հովվում է գիւղական խաշը։ Նա հովվով ու սրտով սիրով վիրաբերվում է գէպի իւր փոքրիկ հօտը։ Ամեն մէկին իւր ոչխարներից նա ձանաչում է, գիտէ նրանց մորթու և կազմուածքի այս կամ այն առանձնայատկութեան շնորհիւ ամեն մէկը այդ ոչխարներից կրում է իւր առանձին, սեպհական անունը, որով կնքել էր նրան Հասօն նոյն իսկ փոքրիկ գառան լցա-աշխարհ գալու առաջին օրից։ Եւ ինչպէս քնիքոյշ և սիրալեր էին այդ անունները, — «աւորակ», «աօփիկ», «աստղերը», «Գօտո» — այդ ամենը Հասօն

ամենամօտ և հարաղատ ընկերներն էին, նրա սիրելիները։ Եւ որքան բաղդաւոր էր զգում իրեն Հասօն, որքան հպարտանում էր նա նրանցով։

Դեռ վաղ առաւօտեան, երբ ծագող արեւը թափելով իւր վելջին ճիզվ աշխատում էր պատռել հազար ու մի գոյներով ներկուած, շառագունած արշալցյալ, Հասօն, առներով իւր հետ լաւաշ ու պանիր, քշում էր իւր հօտը գէպի մերձակայ, կանաչով լի սարերը. և որքան ուրախ, որքան վուարթէր լի լինում նա այդ բոպէներին։ Երկար ցուպը ձեռին նա արագ ալսագ գնում էր առաջ, այծի ձարպիկութեամբ ոստնում էր քարից քար, ձորից ձոր, և նրա անհոգ, ուրախ երդի բարձրաձայն ելեկջները խուլ երկարատեւ արձագանքներով կրկնվում էին սարերի հեռաւոր փեշերքներում։

Եւ ի՞նչ էր այդ երդը. ոչ լաց, ոչ գանգատ բաղդի անողում, ծանր հարուածներից, ոչ սփոփանք կեանքից մաշուած, թուլացած հոգու և ոչ խարուսիկ յօյս ապագայի։ Ոչ այդպէս չէր Հասօնի երդը. նա ազատ էր ինչպէս քամին, որ անդապրում շուացնում էր սարերի անդունդներում և լանջերում, նա ազատ էր ինչպէս լեռնային արծիւը, որ սարի ապառաժոտ զագաթից ահա ձգել է իւր սրատես հայեացքը գէպի վայր և անվօրով, վեհանձնօրէն, իրեւ հսկայական լեռների ազատ արքայ, նայում է այնտեղ ցածում խճճուող մարդկութեան չնին, հազիւ հազ նկատելի միջատների վիրայ։

Այո՛, այդպէս էր երդում և Հասօն. .

II.

Հասօն բնիկ Դ.—եցի չէր. շատ, շատ տարիներ պրանից առաջ մի մութ գիշեր նրա Ոսկեհատ մայլը, շունչը կտրած, ուժից ընկած, ոտարորիկ մտել էր Դ. գիւղը. նրա զրկեն էր և եօթնամնեայ Հասօն։ Խեղձ՝ Ոսկեհատը ապաստա-

բան էր փնտոռում. ամբողջ երկար օրեր և դիշերներ նա իբրև վայրենի գաղան պտտել էր մութ անտառներում, ձորերում, անդրսներում: Սարսափելի դիշերներ... Այդ անցեալի յիշողութիւնները անչնչելի դրոշմուեցին խեղջի ուղեղում: Նա փախչում էր իւր փոքրիկ Հասօյի հետ անսիրտ, անդրութ թշնամուց. Նա փախչում էր Հալածանքից, մահից: Քանի քանի անգամ նա մոլորուել էր անձանօթ, անվերջ, խիտ անտառներում, քանի քանի անգամ մութը, անձրեւ, փայլակը վրայ են հասել այն իսկ բոպէին, երբ անպաշտպան Ոսկեհատը գտնվում էր մութ, սկսի տուող անտառներում: Ինչպէս կատաղաբար մռնչում է քամին: Այդ ի՞նչ է. կարծես, երեխայի լաց լինի դա: Ի՞նչ, ինչպէս սուր է այդ ձայնը: Ոսկեհատը շտապով կռանում է և նայում փոքրիկ Հասօյի երեսին. ոչ Հասօն անշարժ է. Նա հանգիստ քնած է մօր գրկում: Խեղջ, խեղջ Հասօն. Նա ոչինչ ոչինչ զգիտէ, նա դեռ փոքրիկ է, շատ փոքրիկ... Իսկ անտառում կրկին լառեց քամու կատաղի, մերթ լացող, մլաւող, մերթ ոռնող շվշվոցը: Ոսկեհատը դողալով կանդ է առնում մի մեծ ծերացած ծառի տակ. այնտեղ վելեռում խուլ սօսափիւնով շփում են միմեանց ծառերի թերթիկները, կարծես, հառաջնով ճռճռում են հսկայի լայնատարած ճիւղերը. որքան ցած են կռանումնոքա քամու զօրութեան տակ: Ահա նոքա իրենց թաց, սառն թերթիկներով խփում են Ոսկեհատի տաքացած, քրտնած երեսին. Նա դուրս է գալիս ծառի տակից և դիշերային մթութեան մեջ շարունակում է իւր ուղին: Մութ է, սարսափելի մութ է ամսամած երկինքը. ոչ մի աստղ երկնակամարի անհուն տարածութեան վերայ: Ոսկեհատը անդադար խիւմ է ծառերի չորացած թփերին, սուր, անտաշ քարելը խոցում են, ծակոտում են նրա բոքիկ ոտները: Ահա մի ի՞նչ որ տաքութիւն զգաց նա իւր կրունկի մեջ արիւն է դա, վը լք—Ոսկեհատը չի նացում. նա շտապում է, շտապում

է որքան կարելի է շուտ հեռանալ այն տեղից, այն տեսարաններից: Նա փախչում է իւր ծննդավայրից:

Յանկարծ սե, միմեանց մօտ կուտակուած ամսերում յուլաց փայլակը, լոռեւց ուժպին որոտումը և մի ակնթարթում անտառը լուսաւորուեց մի տարօրինակ վառ-կաթնագոյն լուսով. հեռուում երեւաց մի կյա սպիտակ պրատաշքարիի. դա հին, թողած և արգէն մոռացուած մահմեդական մզկիթի խարխուլ աւերակներն էին: — Ի՞նչ է այդ, մտածեց վախեցած Ոսկեհատը. Նա լսել է պառաներից, որ գիշերները անտառներում շրջում են յաւերժահարներ, դեկր, չմլպտուած երեխաների անմեղ հոգիներ, գրողներ: Նա ամբողջ մարմնով դողում է. Նա շուտ շուտ խաչակրնքում է ելեսը և նրա չորացած, այլուող շրթունքները մեքնայաբար արտասանում են աղօթքի հատուկտոր խօսքերը: Իսկ փոքրիկ Հասօն զարթել է մօր գրկում և լալիս է. Նա քաղցած է. այդ աղերսալի լացը մորմնքում է խեղջ մօր սիրալ. Նա շտապով բաց է անում իւր կուրճքը և տալիս է ստինքը երեխային. վերջինը ագահութեամբ սկսում է ծծել. իսկ ստինքը չորացել է. վախից սպառել է մօր կաթը և անտառի մթութեան մեջ կրկին լսելի է լինում խեղջ, քաղցած երեխայի սրտամաշ լացը: Բայց ուր է շտապում ողորմելի Ոսկեհատը. այն ի՞նչ զարհուրելի տեսիլ է, որ անդադար մղում է նրան առաջ և միշտ առաջ: Ի՞նչու խեղջը աշ ու սարսափով յետ է դարձնում իւր արտասուքից թաց, արիւնախառն աչքերը. ում է որոնում նրա անհանգիստ, շրջմոլիկ հայեացքը առաւօտեան թանձր մշուշի մեջ. ի՞նչ է մտաքերում խեղջը այն բոպէին, երբ նրա անդունացած, դալկած երեսը սկսում է ծումուել ներդային ցնցումներից: Այս, Նա չի մոռացել այն զարհուրելի պատկերը. իբրև կենդանի տեսիլ իբրև ներկայի իրողական փաստ իւր ամեն մի մանրամասնութեամբ կանգնած է նրա առաջ անցեալը, այդ մօտ, տխուր անցեալը: Երկք օր սրանից

առաջ Ոսկեհատը երջանիկ էր. նա ունէր տոռն, տեղը զաւակներ, դեռ կենդանի էր նրա Մրտօն, նրա աչքի լըս, սիրելի Մրտօն. իսկ այժմս.... այո՛, նա լսւ յիշում է այդ երեկոն, այդ սարսափելի երեկոն: Դեռ նոր էին վերադարձել արտերից գիւղացիք, երբ քրդերի մի ասպատակ խումբ մտաւ գիւղը. աւազակները սկսեցին իսկըն և եթ ամեն ինչ արի քաշել: 0 դը լուսեցաւ լաց-աղաղակով, անէծքով, աղաշանքներով: մի լոպէից հրդեշը սկսեց լափել թալանած, կողոպտած գիւղը: Աղողողորմ տեսարան: Զիաների խրիստոնոցը, ոչխարների մայերը կովերի բառաչումը խառնուելով երեխաների ճշճպոյի և կանանց բարձրաձայն լաց ու կոծի հետ կազմում էր մի անորոշ սրտամաշ քառո, ուր թագաւորում էր աւազակ քրդի յաղթողական—«Ալահ»ը:— Գիւղը պաշարուած ու թալանուած էր. դէս ու դէն ընկած էին թշուառ հայերի ջախջախուած, այնշանդակուած դիսկները. մէկ քանիսը գիւղացիներից դէս պաշտպանվում էին յարձակողների դէմ և թանգ գնով էին ծախում իրենց կեանքը բարբարոսին:

Գիւղի հրապարակում պատրաստ էր կարաւանը, որ բաղկացած էր աւարի առնուած աղջիկներից, երիտասարդներից և տնային կահ կարասիքից. և դեռ գիւղի ծայրում Փրկչ քարաշէն մատրան մօտ մի խումբ գիւղացիներ կռվում էին քրդերի հետ: Այնտեղ էր և Մրտօն. նա առիւծական քաջութեամբ հրացանը ձեռին դարձաւ վերջին անդամիւր ընկերներին, և զէնքերի շառացինի միջեց որոտաց նրա աշուելի, յաղթականից:

— Մեռնեք, ախպէքք, մեր Քրիստոսի սուրբ հաւատի համար... Դուրբան նրա արդար անուան, — և նա յարձակուեցաւ Միրզա-բէյի վերայ, որ խմբի առաջնորդն էր. այդ լոպէին հեռուից նրա աչքին ընկաւ Ոսկեհատը:

— Փախիր, Ոսկեհատ-ջան, Հասօյիս, Հասօյիս պահիր... փախիր անտառը...

Այդ եղաւ նրա վերջին պատուերը:

Ոսկեհատը վախաւ: Աչա երեք օր է, ինչպէս նա թափառումէ անտառներումնա հեռու, հեռու թողեցիւր մայրենի Ն—շէնը, թողեց նրա ծխացող աւերակները, պղծուած մատուները այրուած, քանդուած խրձիթները:

Մինչև այժմն, երեխ, ընկած են սպանուածների դիսկները և փթռում են բաց օդի տակ. գիւղական ընկերը հաւաքուել են և լիզում են նրանց երեսը, մարմինը, վերքերը. ագուաւները գումաքաբեր կրկռում են վերևում և ճախրիլով նատում են մեռածների երեսների վերայ և կծում են նրանց լցին բացած, անշարժ ապակեայ աչքերը:

— Ո՞ւր է Մրտօն,—անցնումէ Ոսկեհատի լարուած, բորբոքուած ուղեղով,—ի՞նչ պատահէց նրան, յաղթից թէ... թէ նա էլ մեռած ընկած է այնտեղ մատրան մօտ, և ագուաւները, ընկերը լիզում են: Մրտօ, Մրտօ....

Եւ Ոսկեհատը սարսափելով նայում է յետ:

Կամաց կամաց նօսրանում է առաւտօնան մշուշը և տեղի է տալիս արեգակի առաջին լուսաւոր ճառագայթներին: Սնտառը զարթնումէ, առաւտօնեան զով զեփիւրը անցնումէ տերեների միջով և նրա սօսափիւնը խառնուելով զարթնած թոշուների ուրախ, զուարթ ճկվոցի հետ, լցնում է պարզ հազար ու մի բուրումներով լի օդը հաղիւ հազ ըմբռնելի, բայց գեղեցիկ, քաղցրահնչեւն մեղեգիով: Բնութիւնը ուրախ է, նա տօնում է իւր առաւտօր. նա չգիտէ և չէ էլ կամենում իմանալ Ոսկեհատի ցաւերը և տառապանքները:

Մի քանի լոպէից արեգակի կարմիր շրջանակը սկսում է լողալ պարզ կապցյա երկնակամարում, և հեռու, հեռու լուսաւորում է մի շարք անակներ, խրձիթներ. դա գիւղ է:

Ուժասպառ Ոսկեհատը անզօր ընկնում է մի հին, փթած, արդէն բորբոնած թփի տակ, իսկ փոքրիկ Նասօն հանգիստ քնած է նրա գրիւմ: անհոգ, անմեղ մանկական ժպիտը խաղումէ նրա շըմունքներին: Ոսկեհատը սկսում է նիրհէլ թու-

լութիւնը, տանջանքը, յոգնածութիւնը կամաց կամաց յաղթում նրա ամուր կազմուածքին. նա ել չէ կամենում շարունակել իւր ուղին. նա աւելի և աւելի կռացնում է իւր գլուխը և ընկնում մի կիսաքուն թմրութեան մէջ։ Խեղձ Ռակիչատ...

Խսկ պյանտեղ հեռու, հեռու դեռ այրվում է Հ—շէնը. կրակուած տնակների փլատակների տակից դեռ երեւում է բոցը և հրային երկար, արածայր լեզուները դեռ լիզում են կիսաքանդ շնչքերի ողորմելի մնացորդները։ Հ—շէնը դառնում է մոխիր, և թանձր, սե ծուխը մեծ քուլաներով բարձրանում է երկինք, տանելով իւր հետ մեռնողների լացը, անէծքը, հառաչանքը, աղօթքը և յաղթողների հնառոցը, ուրախութիւնը, հայհյանքը և խռպոտ, բերկալից աղաղակները։

III.

Ն. գիւղի ռէսը ունէր միայն մէկ աղջիկ։ Աստուած իրեւ ծերութեան մլսիթարութիւն, իրեւ պահապան հրեշտակ էր պարգևել այդ աղջկան ռէսին։ Նրա կնոջը։ Նրան կանչում էին նուռիկ։ Եւ ինչպէս անխելք սիրում էին նուռիկին ծերունի ռէսը և նրա պառաւ կինը։ Օրօրոցից մինչեւ օրս նոքա ամփոփել էին նուռիկի մէջ իրենց յօյսը, սէրը, ապաւէնը և անցած, գնացած երջանիկ օրերի ամենաքաղցր յիշողութիւնները։ Նուռիկը նրանց համար նցին խակ իրենց սեպհական կեանքի ու գոյութեան և նպատակն էր և շարժառիթը ապրել առանց իրենց «մինութար» նուռիկին նշանակում էր շապրել մեռնել։ Եւ նուռիկը դարձաւ այդպիսով իւր ծնողների դիցուհին, աստուածուհին, որի առաջ նրանք երկապագում էին և աղօթում։ Նոքա մի զարմանալի ծշութեամբ գուշակում էին երեխայի աշքերից ու նայուածքից նրա ամեն մի ցանկութիւնը և խսկըն կատարում էին, կատարում էին իրեւ մի սրբազն պար-

տականութիւն, իրրեւ օրէնք։ Դժուար է ասելով էր աւելի սիրում նուռիկին. ծեղունի ոէսը, թէ նրա պառաւ Աննան։ Նոքա, կրածիս, մրցում էին իրար հետ այդ անհուն, եսական, կըր սիրոյ արտաքին արտայայտութիւնների մէջ. նոքա կտրում էին իրենց բերնից, որ կշտացնեն իրենց նուռիկին։

Երբ երեկոյեան դէմ ռէսը գառնում էր տուն, նա խսկըն մտնում էր փոքրիկ, դեռ երեխայ նուռիկի սենեակը և վեցնելով նրան օրօրոցից պիսում էր ձգձգել իւր կոշտ, արեառ, մազոտ ձեռների վերայ։

— Նանի, նանի, իմ նուռիկ, նանի, նանի, իմ աստղիկ, — մրթմրթում էր ռէսը և նրա երեխին սկսում էր խաղալ երջանկութեան բերկալից ժպիտը։

— Կամաց, կամաց, երեխի կռւոր կըհանես, — նկատում էր այդպիսի րոպէններին մի անբաւական ձայնով։ Աննան։

— Եհ, ի՞նչ հի դարտակ դարտակ դուրս տալիս. Էդքան խօ զիտեմ, — նկատում էր ռէսը և շարունակում էր ձգձգել երեխային։

— Նանի, նանի, ի՞մ հոգեակ, — լսվում էր սենեկում նրա ամուր ձայնը։

Խսկ նուռիկը յանկարծ սկսում էր լալ։

— Անքմիգ մեռնեմ, նուռիկ-ջան, շաբրդ տանիմ, զաւակ-ջան, — բացականչում էր Աննան։

— Խօ ասի, խօ ասի ախրի... էդ ա է, — և առնեյով երեխային ռէսի ձեռքից հեռանում էր իւր սենեակը։

Ռէսը ամօթահարուած, լուռ ու մղանջ քաշվում էր անկիւնը։ Նա զգում էր իւր մեղքը նուռիկի առաջ. նս զգում էր, որ ձշմարիտ մի քիչ պինդ էր սեղմել երեխայի կուռը, բայց չէր ուզում խոստովանուել զրանում իւր կնոջ, Ան նայի, առաջ։

— Եհ, ի՞նչ ասեմ քեզ, ու միշտ կոտրած գտալի պէս մէջ ես ընկնում, — նկատում էր նա ատամների միջից։

— Երեխան քաղցած է ու զբա համար էլ լալիս է. դու

լաւ է, որ կերակրէիր նրան։ Խմբեղքը ի՞նչ է, ո՞ւ շարժնակում էր նաև մի քանի լուսէից։

— Ավագ, ի՞ս չեմ նայում երեխին և ու, տէր Աստուած, մի սրան մոտիկ արէք։ Հոգի ունեմ, խղճմտանք ունեմ, որ էդպէս տուտուց-տուտուց դուզս ևս տալին, — զայրանում էր Աննան։

Իսկ ոէսը հեռուից իւր լայն բրդոտ յօնքերի տակից նայում էր, ինչպէս նուռիկը իւր փոքրիկ հասալիկ ձեռներով փաթաթվում էր Աննայի վզին և դնելով իւր գլուխը նրա կրծքին, սկսում էր հանգիստ նիրհիլ։ Ոէսը ակամայ հեռացնում էր իւր հայեացքը այդ տեսարանից. նա սկսում էր նախանձել Աննային։ Եւ իրաւ, այդ իրենց զաւակի սիրահար ծնողները ընդունակ էին նախանձել անգամ մի-մեանց, թէ այդ սիրոյ առարկան, նուռիկը, պատահմամբ սիրէր նրանցից մէկին աւելի կամ պակաս, քան թէ միւսին։ Ամեն մէկը նրանցից աշխատում էր բռնել երեխայի սրտում առաջին տեղը. թէ ոչ — նոքա կրհամարէին իրենց զրկուած, մերժուած։

Այդպէս մեծացաւ նուռիկը. նա արդէն 17 տարեկան էր։ Եւ, ծշմարիտ, անկարելի էր չփրել այդ չքնաղ, գեղեցիկ նուռիկին։ Բնութիւնը, կարծես, թափիլ էր իւր ամեն շիզը, իւր ամեն դիտութիւնն և կարողութիւնը այդ արարածի ստեղծագործութեան ժամանակ և ընծայել էր աշխարհին գեղեցկութեան մի կատարելատիպար։ Առասպե-լական դիցուհիներից ամեն մէկը, կարծես, աշխատել էր պարգևել նուռիկին այն, ինչ որ հապատակ էր նրա գեղբնա-կան ուժին և զօրութեան։ Գեղեցիկ էր նուռիկը սաստիկ գեղեցիկ. երկարահատակ, սւե, մութսւե, խիտ և միշտ ար-ձակուած մազերով, որոնք իբրև փրփրաւոր ալիքներ պա-տում էին նրա փղոսկրեայ, ուղիղ գծագրած վեզը և նրա սպիտակ, մի քիչ դուրս ցցուած, գլորակ ճակատը, երկու մեծ սւորակ, միշտ վառվռուն աչքերով, որոնք խոստանում

էին այնքան սէր, այնքան կիրք և երջանկութիւն, բարակ, ճկուն իրանով և երկու փոքրիկ, սրած ոտնկրով, — նուռ ոիկը յեշեցնում էր Նիրակի գեղեցիկուհիներին. և թողնում էր տեսնողի վերայ մի այնպիսի խոր, անդիմադրիկ տպա-ւորութիւն, որ տեսնողը զմայլած կանգ էր առնում և երկար երկար նայում էր հեռացող նուռիկի ետևից, վա-խնալով շարժուել և զարթիկ այն գիւթիչ երազից, որ աշա երևան է գալիս նրա աչքերին։

Իսկ նրա ձայնը, այդ ձայնը, մի անգամ լսողը երթէք չէր կարողանում մոռանալ նրան։ Երբ որ երկեցիան դէմ Ն. գիւղի աղջիկները հաւաքվում էին մի տեղ, տան կարի վերայ և սկսում էին իրենց կէս թլքական, կէս հայ պա-պերից աւանդուած երգերը, երգեր, որոնք ձգում էին լսղին մի ախուր, անբացատրելի մելամաղդուտ։ տրամադրութեան մէջ, որոնք չէին քարոզում, ոչ եռանդ, ոչ յոյս և որոնք սովորեցնում էին հնազանդել և համբերել միայն, համբե-րել անվերջ, մինչև հոգու վերջին շունչը, — օ, այդպիսի բուպէսներին նուռիկը հրաշալի էր։ Նրա մեղմ փայփայող, շյող ձայնը զանազանվում էր ուրիշների ձայներից, փա-կում էր նրանց և լրջալով այնտեղ, եթերքի բարձրութեան մէջ իւր յատակ կլեէցներով կորչում էր վերջապէս պարզ թափանցիկ օդի անհուն տարածութեան մէջ։

Բայց ի՞նչ էր երգում նա, ում համար էր այդպէս ան-կանոն բարախում նրա սիրու։

Նա երգում էր, թէ ինչպէս առաւտօտեան վարդը կամաց կամաց բարձրացնում է իւր գլխիկը և, նկատելով ծագող արեւը, շտապում է պահել նրանից իւր վերայ ընկած սառն, փայլող ցողի կաթիլը։ Նա երգում էր, թէ ինչպէս արեւը չորացնում է այդ ցողը և վարդը անզօր փակում է իւր թեր-թիկները և տիրագին, խղճորէն կուացնում է գլխիկը ցած, սւ հողին։ Նա երգում էր, թէ ինչպէս կարկաջուն առուակի ափին բումնում է կանաչ եղէզը և իւր սրածայր թեր-

թիկներով շցում է ջրի խաղաղ մակերևոյթը, ինչպէս խօսում է առուակը՝ եղէզնի հետ, ինչպէս փոքրիկ թռչնակը զգուշութեամբ մօտենում է տիկին և ցայտելով քարից քար խրում է կտուցը առուակի դովարար ջրի մէջ։ Նա երգում էր, ինչպէս ծիծառը անդադրում ճախրում է օդում և շենում է իւր բունը և մթին յոգնած փակում է իւր փոքրիկ աչքերը և պահում է գլխիկը թեև տակ, ինչպէս նոր ծառ գող արեւի ճառագայթները ընկնում են սարերի գագաթի շուրջը։ Իբրև մի լուսափայլ պսակ և ինչպէս գոյնզգոյն երանդներով ներկվում է անտառը, ժայռերը, վեթխարի սարերը և ինչպէս կամաց կամաց մի քանիսը այդ ճառագայթներից համառ են ջրի մակերևոյթին և ցոլացնում են նրան ծիածանագոյն փայլերով։

Սյդպէս էր երգում նուռիկը՝ Կուա անմեղ, կուսական ճայնը փառարանում էր միայն Աստուծուն և Նրա գեղեցիկ աշխարհը։

IV.

Երեկոն Համառում էր։

Նօրիգննը սկսել էր մթնել։ մութ ստուերները շուտ շուտ կուտակուելով միմնանց մօտ փաթաթում էին մի թանձիք քողով։ Դերեկուայ լոյսը կամաց կամաց տեղի էր տալիս երեկոյեան նօսր մթութեան։ Արեւի ճառագայթներից տաքացած օդը սկսում էր ցրտել. փերսուզեայ երկնակամարում տեղ տեղ վառվում էին պլազմու աստղերը. իսկ հեռուում երեւում էր ծագող կիսալրումնի ցոլացող եղջեւը շրջապատած արծաթափայլ փերաւոր ամպերով։

Գիւղը լուռ էր։ Ընթրիքի ժամանակ էր։

Գիւղի ամենամօտ սարի ստորոտից իջնում էր Հասօն։ Նա դանդաղ քշում էր իւր առաջից փոքրիկ հօտը։ Նա անհոգ ձգել էր ուսերին արխալրուղը կպցրել էր գլխին իւր անբաժան քրդի քոլով և երգելով մննում էր գիւղը։ Ժա-

մանակ առ ժամանակ նա ընդհատում էր իւր երգը, դառնում էր ոչխարներից մէկին և կարդալով նրա գլխին մի քարոզ քշում էր նրան մի քիչ առաջ և կրկնն շարունակում իւր գնացքը։ Նա ստէպ ստէպ նայում էր ծագող լուսնին, պսպղուն աստղերին, նայում էր երկար ու բարակ, կարծես, աշխատում լինել ըմբռնել աշխարհի կազմակերպութեան գաղտնիքը և կրկնն երգում։ Նրա ձայնը ազդու, ուժգին ելեէջներով կրկնվում էր սարի փեշելքներում և թուլանալով վերջ ի վերջոյ լուսմ էր այնտեղ, սարի գագաթի մօտ։

Հասօն մօտեցաւ գիւղի աղբեիւրին Ոչխարները ուրախ ուրախ մայելով մտան ջուրը։ Հասօն կուցաւ և առնելով ափերի մէջ ջուր սկսեց խմել։ Երբ նա բարձրացրից գլուխը աղբեիւրի միւս ափին տեսաւ մի սպիտակ ստուեր։ Նա ուղղեց իւր սուր, ալծուի հայեացքը այդ կողմը և ժապաց։ Նա Ճանաշեց նուռիկին։

Ոէսի աղջեկը, սափորը ուսին, ամօթիսած կանդնած էր ափի մօտ և սպասում էր իւր հերթին. Նա եկել էր ընթրիքի համար ջուր առնելու։

Ոչխարներից մէկը մօտեցաւ նուռիկին և մեղմ մայեց։ Նուռիկը սկսեց շոյել նրա թաւշեայ բուրդը։

— Բարի երեկոյ, աղջի, — նկատեց Հասօն։
— Ասծու բարին քեզ—շնջեց նուռիկը։
— Ի՞նչ է, ջուր ևս առնում, — զարձաւ նա կրկնն նուռիկին։

— Հա, իրիկնահացի համար է, — և նուռիկը կարմրեց։ Հասօն չէր հեռացնում նրանից իւր սուր գիտող հայեացքը։
— Ի՞նձ ինձ ևս կրտամ, — առաջարկեց իւր ծառայութիւնը Հասօն։

— Զէ, ինչու, ևս էլ կ'առնեմ։
— Բ'ը, ասում եմ։
— Զէ։

— Պա՛: Եղ ո՞ր օրից նազլու ես դարձել — ծիծաղից Հասօն: Նուռիկը ոչնչ չպատասխանեց:

— Հը նազլու Նուռիկ, — կրկնեց իւր հարցը Հասօն:

— Հասօ, ինչո՞ւ ես այդպէս խօսում:

— Բաս... ինչպէս ախր խօսեմ քաղքումը, աղջի, չեմ սովորել որ տէրտէրի նման զրոց խօսքեր ասեմ, խօսք եմ ասում, ոնց զիտեմ: Բաս թէ չուզես ինձ նման խեղճ հովուի հետ խօսել, եղ էլ քո բանն է... ինքդ խօ ուսի աղջեկ ես, — կծու, հեգնօրէն նկատեց Հասօն և նրա նեղ շրթունքները աւելի ես սեղմուեցան:

Սյու խօսքերը դիպան Նուռիկի ինքնասիրութեան ամենանուրբ լարերին:

— Դուրս ես տալիս էլի, — շնչեց նա և բարկացած վայր դրեց ջրի սափորը:

— Զէ, Նուռիկ, չէ. դու դորթ ասա, Աստուծու անունով, ինչո՞ւ ես փախչում ինձնից: Էն օրն էլ... մի՞տդ է, երբ ես մօտեցայ մեր աղջկերանցը, դու շուռ եկար ու փախար: — Նուռիկը կրկնն լուռ էր:

— Սիր ես ի՞նչ եմ արել քեզ, ի՞նչ վատութիւն եմ արել: Սյու հարցը այնքան պարզ էր արտասանուած, այնքան աղերսագին, որ սուր ցաւով թափանցեց Նուռիկի սիրտը:

— Սիր ես... ես... ի՞նչ եմ արել քեզ, ի՞նչ վատութիւն եմ արել — կրկնուեց Նուռիկի ականջում:

Հասօն լուռ, գլխակոր սպասում էր նրա պատասխանին:

— Դու, Հասօ, դու ինձ ոչինչ ոչինչ չես արել, — նկատեց վերջապէս մի թոյլ, ձնշուած ձայնով Նուռիկը և իսկըն լուց:

Ոչխարները հեռանում էին աղբիւրից:

— Հապա, հապա ինչո՞ւ չես նայում ինձ, — մի լոպէից հարցը Հասօն:

— Ե՞ս ոչ ոչ, — մըթմղթաց Նուռիկը և կարմրեց:

— Հապա ինչո՞ւ միշտ խօսում ես Սագյի հետ:

— Սագյի:

— Հա՛, հէնց եղ սարսաղ Սագյի հետ:

Նուռիկը կուայցաւ և լցրեց իւր սափորը:

— Ի՞նչը ես մոգնում, Հասօ, ե՞րբ եմ խօսել նրա հետ:

— Բաս սովում եմ ասում: Լսիր, Նուռիկ, ախր գու չես տեսնում, վոնց եմ տանջվում ես, ախր գու, Նուռիկ, իմ սրտի ընտրածն ես, իմ ուզածն ես: Ես սիրում եմ քեզ Նուռիկ, այն օրից, երբ մեր մատրան ու Խաչքարի ուխտն էր. երբ ես առաջին անգամ տեսայ քեզ մօրդ հետ, իմ սիրտը ուզեց քեզը ես ընտրեցի քեզ, Նուռիկ, և խեղճ Հասօն այն օրից մինչեւ օրս չունի հանգիստ: Սրիւն ու լեղի է գնում սրտովս, Նուռիկ-ջան, էլ քուն չունեմ գիշերները, ցնորուածի նման թափառում եմ սարերում, ձորերում և փնտում եմ քեզ: Պատահում է, որ լսում եմ քո անցյշ ձայնը, գուկանցում ես ինձ, ես վազում եմ դէպի քեզ և մնում եմ կրկն մնակ սարերում, ոչ ոք չի լինում:

(ՏԾՕԿ-50) ՀԾՅ-20/4

Հասօն լուց, լուռ էր և Նուռիկը միայն նրա կուրծքն էր, որ անկանոն և արագ արագ բարձրանում էր նրա հագուստի ծալքերի տակ: Մի ըսպէից Հասօն գլխակոր մօտեցաւ նրան:

Վերջնը շուարած էր: Հասօյի կըքուտ ձայնը խոր տպաւորուել էր նրա սրտում, նրա անմեղ, անփորձ, կուսական սրտում և այդ սիրտը համակրում էր Հասօյին: Սյու սիրտը ես նոյն ուխտի օրը առաջին անգամ ուժին բարախեց, երբ Նուռիկը տեսաւ գեղեցիկ հովուի սեղակ աչքերը. այդ սիրտը արդէն կորցրել էր իւր սովորական անդորրութիւնը, զրկուել էր իւր անվրդով, պատասելիան քնից:

— Լսիր, Նուռիկ-ջան, լսիր, հոգիս, — շարունակեց Հասօն, — ես ինքս էլ ուսի որդի եմ: Իմ հայրենիքս այստեղ չէ. նու հեռու է, շատ հեռու: Իմ հօրս սպանեցին քրոգիւր... օօ ես կ'առնեմ մի օր վեհժս, — և Հասօյի ձայնը անգօր կտրուեց: Սղբիւրի մօտ սոսենու սոսափիւնն էր միայն, որ ինանգա-

ըում էր գիշերուայ լոռւթիւնը՝ Նեռուից լսկում էր շնկրի երկարատև հաչողը:

— Ես հարուստ էի, նուռիկի, ինձ թալանեցին և աղքատեցրին, — շարունակեց Հասօն, — ես ունեի մի քոյր. ես երեք, երբեք չեմ տեսել նրան: Մայրս միշտ պատմում է նրա մասին. ասում է, թէ դու շատ ես նմանում նրան:

— Բայց ուր է նա, — շնչեց նուռիկը հետաքրքրուած:

— Ուր է նա, չգիտեմ: Նրան գողացել են, քշել են քրդելը թէ թրքերը, չեմ յիշում — և Հասօյի ձայնը կրկնի կտրուեց: Արտասուքի նման մի բան ցոլաց երիտասարդի աշքերում: Նուռիկը ախուր նայում էր գիտնին:

— Դեռ շտեսած նրան, ես սիրեցի նրան, սիրեցի և քեզ, նուռիկ: Իսկ դու, դու փախչում ես ինձնից... ինչո՞ւ: — Կրկն այդ «ինչո՞ւ» խոցեց նուռիկը սիրտը:

Նա անշարժ կանգնած էր. նա դեռ գտնվում էր Հասօյի տխուր պատմութեան ներգործութեան տակ: Հասօն հանեց իւր մաշուած, մորթեայ քօրօզս սրբեց Ճակատի քրտինքը և, մօտենալով նուռիկն, բռնից նրա ձեռից այդ ձեռը տաք էր և դողում էր:

— Թող, թող ինձ, Հասօ, ուշ է. մերոնք սպասում են ինձ, կ'իմանան, որ ես մեկի հետ խօսել եմ, և իմ անունը, իմ նամուսը կրկոտրուի: Ամօթ է, Հասօ, թող: — Նու փորձեց պղատուիլ Հասօյի ձեռքից. սափորը գլորուեց արօտի վիրայ և դարդակուեց: Հասօն նորից ջուր առաւ և տուեց նուռիկն:

— Ասա, նուռիկ, ասա. Աստուած վկայ է մեզ:

— Ի՞նչ ասեմքեղ, Հասօ: Ես, ես... — և նրա ձայնը ներքին յուզմունքից յանկալիք կտրուեց և նա դանդաղ քայլերով հեռացաւ աղքիւրից:

Այդ ըոսկէին լուսնեակի ճառակայթները ընկան նրա վերայ. իբրև յաւերժաւահարս, իբրև դիւթական մի տեսիլ անցաւ նուռիկը Հասօյի առաջովք: Մի քանի րոպէից նա կանգնեց

և դարձրեց իւր երեաը աղքիւրին այնտեղ սօսիների ստուերի տակ, իբրև արձանտ անշարժ կանգնած էր կամսն:

— Հասօ, հոգիս, ես սիրում եմ քեզ. սիրում եմ վաղուց, — համարեա շնչեց նուռիկը և իսկոյն անհետացան մօտակայ բլրի ետևը: Հասօն, կալծես, զարթեց խոր քնից: Այդ շնոցը թուեց նրան երաժշտական մեղեղի, երգի զմայլցուցիչ դայլալիկներ: Այդ, նա չէ սխալվում, նա պարզ լսեց այդ ձայնը. այդ արտասանողը նուռիկն էր: Նա վազեց նրա ետևից: Իսկ նուռիկը արդէն անհետացել էր: Ուրախ, երջանիկ մերադարձաւ իւր խորթիթը այդ գիշեր Հասօն նա սիրում էր և բաղգաւոր: Էր իւր առաջին սիրով:

V.

Գասպարինց Սագօն, որին Հասօն սարսաղ էր կրչում, պատկանում էր զիւղացիների այն շարքին, որոնց մէջ որէ ցօր նուազում է և անհետանում, դժբաղդաբար, պարզ գիւղական տիպարը: Այդպիսիներին էլ չէ հրապուրում, չէ քարշում ոչ հողը, ոչ վարուցանքը, ոչ խորիք, ոչ գերանդին: Նոքա միշտ խորշում են գժուար Փիզիքական աշխատանքից: Նոքա փշանալով այն կամ այն պատճառով, փշանալով բարոյապէս, հեռանում են բնութիւնից և նրա առատ պարգևներից: Այդ բնութիւնը սկսում է սարսափիլի խորթթուիլ նոցա աչքին: Եատ սակաւ է պատահում, որ այդպիսի այլափոխութեան պատճառն ու շարժառիթը լինեին ազնիւ և համակրելի. մեծամասնութիւնը թողնում է գիւղն ու գիւղական կեանքը նոյն խոկ ծուլութեան և ազահութեան շնորհիւ: Այդպիսիները որոնում են աւելի հիշտ և ձեռնոտու միջոցներ ապրուսի: Նոքա աշխատում են, շարչարվում են քիչ և պահանջում են իբրև վարձ աւելի շատ: Այդ մի տեսակ գիւղական «եօն-նիշու» ամենաանհամակրելի տիպարներն են, որոնք պայութիւն ունին Հայ կեան-

քում: Եթէ զգաց, օրինակի՛չամար, այդպիսի մեկը մի ինչ որ հակումն դեպի հեշտասկիութիւն վեղսութիւն, այդօրից արդէն նա մնաս բարեւ է ասում իւր բոլոր լաւ, բարի, մարդկացին զգացմունքներին և դառնում է գիշատիչ թռչուն, պարդ որ ճգելով իւր սարսափիկի ոստայնը սկսում է ծծել շրջապատղողների արխնն ու քրտինքը: Եւ ինչ միջոցներ, ամեն գործ չեն դնում դոքա իրենց նպատակին համելու համար, ամեն միջոց դառնում է նրանց համար սուրբ և գործադրելի: Վաշխառութիւն, խարերայութիւն, գողութիւն, ամեն ինչ բանեցնում էն նրանք, և եթէ այսպէս կամ այնպէս համենում էն իրենց անձկալի նպատակին, Աստուած իմ, ինչեր չեն բերում նոքա իրենց խեղճ, միամիտ համագիշացիների գլխին. զրկանք, հարստահարութիւն, տանջանք, — այդ ամենին տանում է և համբերում առանց այն էլ համբերող գիշացին: Եւ ի՞նչպէս այլապէս. Նա ոպից մինչև գլուխ պարտքի մեջ է, ոչ հացր, ոչ տունը, ոչինչ ոչինչ նրանք չեն: Այդ ամենը վաղուց արդէն անցած է վաշխառուի ձեռը, և այդ անվերջ պարուցի տարեկան տոկոսը միայն համարեա, գիլապանցում է գիշեցոյու բոլոր գոյքը: և նա, այդ գիշացին, կամայ ակամայ դառնում է, մի տեսակ հլու հապատակ, անխօս ասլուկ, մի գրաստ, որին իւր ցանկացածի համեմատ բանեցնում է խորամանկ, վաշխառու: Նա չէ սպանում նրան միանգամաց, ոչ այդքան խելք ունի վաշխառուն. նա կամոց կամոց է ծծում նրա կինապու ուժերի հիւթը, նա, սկսումարար է մեռնում նրան:

Եւ ահա այդ գիշական հասպակութեան հիւթը, վարակի անգամերը մի քանի տարուց ամենաճարապիկ կերպով հիւսած ուստայնը ճգում էն գիշելի մեջ, պինդ քարշում կապկառմ ևն նրա թելերը և մինչև վերջը չեն թռչում նրա մեջ ընկած գլուխութիւնը: Այդ գաղաքան անուս քաշխութեան մեջ էն Վաշխառուն յայտնի անունով մարդ է. նա բարեկամ է գործակալի, բարեկարդչի և հոգեւոր կառավարութեան անդամների հետ. Կակ գիշական անուս քաշանան շտու անգամ պարտաւորուած է, լինում տաղ այս կամ այն բացամայութիւնները այդ հոգեւոր կառավարութեան առաջ, և ահա վաշխառուն, որ մի եկեղեցամերը և բարեկաչն մարդ է, Տառտիւֆի խմորից շնորհի տալիք է այդ բացամայութիւնները քաշանայի փոխարքէն: Եւ ի՞նչ հոգեւոր կառավարութիւնը մնում է զրու բարեկարգիչը գործակալը նոյնպէս, գիշական քաշանան նոյնպէս և ինչ պէս տեսնում էք, այդ ամենը էլ, մնույով գուշ և բարեկան, ոչինչ չեն խանգամում աշխարհային կազմակերպութեան մեջ և սա շարունակում է իւր սովորական, կանոնաւոր ընթացքը:

Այդ տեսակ մարդկանց էր պատկանում և Գամագորինց Սակօն: Գիշեցում կանչում էին նրան առարսարը բայց չուտ

գիւղի լիազօր տերն ու իշխանը նրա կամքը — օրէնք է, նրա խօսքը — սուլիք պատահիրանք ամենից աւելի յարգանք վայելողը նաև է, ամենից շատ խօսողը գիւղահամայնական ժողովներում նաև է, ունի վիրայ աղողողը, ունին ընտրողը շընտրողը կրկին նաև է: Նա մի ողութիւն է, ուր կիսնորդ նացած նն լինում և նիւթեական և բարոյական աղդից կարողութիւնը: Անյ նրան, ով կրյանդին չհպատակել այդ զօրութեանը: ամեն կերպ հալածում է նրան թշնամի պաշ խառուն, ամեն կերպ նեղում է և սուրացնում նրան հան կառակ զօրելու ոյժը: Այդպէս են գիւղի ցաւ սարդերը:

Եւ զարմանալին այն է, որ այդպիսիների կողմը բացի մարմնաւոր ու ժիղ, համարիեամ միշտ լինում է և հոգեւորը Գիւղի տէրտէրը այդպիսիների ամենալաւ բարեկամն է: Չափ մութ, ցած գործեր գաղտագողի կատարվում էն վերջնի միջնորդութիւնը: Երկու ոյժ միանում են, քաջ պիտինաս ըլվ, որ անպահուութիւնը հաւաքականութիւնն և համերաշխութեան մեջ էն Վաշխառուն յայտնի անունով մարդ է: նա բարեկամ է գործակալի, բարեկարդչի և հոգեւոր կառավարութեան անդամների հետ. Կակ գիշական անուս քաշանան շտու անգամ պարտաւորուած է, լինում տաղ այս կամ այն բացամայութիւնները այդ հոգեւոր կառավարութեան առաջ, և ահա վաշխառուն, որ մի եկեղեցամերը և բարեկաչն մարդ է, Տառտիւֆի խմորից շնորհի տալիք է այդ բացամայութիւնները քաշանայի փոխարքէն: Եւ ի՞նչ հոգեւոր կառավարութիւնը մնում է զրու բարեկարգիչը գործակալը նոյնպէս, գիշական քաշանան նոյնպէս և ինչ պէս տեսնում էք, այդ ամենը էլ, մնույով գուշ և բարեկան, ոչինչ չեն խանգամում աշխարհային կազմակերպութեան մեջ և սա շարունակում է իւր սովորական, կանոնաւոր ընթացքը:

Այդ տեսակ մարդկանց էր պատկանում և Գամագորինց Սակօն: Գիշեցում կանչում էին նրան առարսարը, բայց չուտ

յելով գրան նա 40 տարիկան համակում կարողացաւ ստեղծել իրեն համար մի այնպիսի անկախ հասարակական դիրք, որ դարձաւ գիւղի «Երևելիներից մէկը» Նրա մասնագիտական պարապմունքը վաշխառութիւն էր։ Սկսելով ոնչից հակառակ բնակոն օլենքներին, նա ստեղծեց ոնչից բաւական մեծ կարողութիւն։ Չար լեզուները, որոնք գոյութիւն ունին ամեն անդ և որոնք կային, դժբաղդաբար, և Դ. գիւղում պատմում էին որ այդ կարողութիւն հիմքը դրուած է ամենացած միջոցներով, որ Սագօն ժամանակով պարապիլս է եղել կեղծ դրամներ ցրուելով և այլ այս տեսակ ափեղփիկ ստութիւններ։ Բայց ի՞նչեր ասես մին պատմում այդ չար լեզուները։ Սագօներջանիկ էր։ Նա ապահովուած էր, ունէր անուն, Հարստութիւն, բարեկամներ, Համակրողներ, ունէր տուն, հող, և վայելում էր աշխարհքի ամեն բարիքը։ Մինք միքի անարդար գտնուեցանք, երբ ասացինք, թէ Սագօն բրոլուպին երջանիկ էր, — դա սխալ է։ Սագօն նոյնպէս ունէր իւր ցաւը։ Նա, որ այնպէս սիրում էր կանաց սեռը, մինչեւ իւր կեանքի 40 ամր դեռ չէր ամրւանացած։ Քրա պատճառը հետևեախ էր։ Սագօյին ստեղծելիս բնութիւնը երեխ, պարապուած է եղել աւելի ծանրակշեռ հարցերով և, ինչպէս հարկն է, չէ նայել Սագօյի վերայ։ Նա, կարծիս, շատապով հաւաքել է հողը, երկու երեք անգամ վայրի վերայ գծագրել է նրան, երեսը և վշելով երեսն տուել է հոգի և կեանք։ Այդպէս էր ճնուել Գասպարինց Սագօն։ Երևակայեցէք երկու ծուռուու կարծ ուժներ, երկար ծիռներ, աշագին տկռած փոր, գլորամեւ գլուխ, հաստ և միշտ կարմիր վեց գուշա, ցցուած ծնուներ, շաշ աշքեր, մեծ քերան։ Հաստ շրթունքներով, որտեղից երկում էին մի շապիք պեւ, ծուռ ու մուռ ատամներ, և մի փառաւոր հայկական քիթ։ Երևակայեցէք այդ ամենը և դուք համարիա ձեր աչքով տեսած կրվնիք Դ. կայի Գասպարինց Սագօյն։ Այդ քվազիմօդոն դեռ չէր կարողացի ի հարկ

մի գիւղական գեղեցկուհու սրտում վառել սիրոյ կրակը և մնացել էր ամուռի։

Իսքը Սագօն իւր կողմից քանիցս փորձել էր գլուխ հանել իւր դիտաւորութիւնները, բայց միշտ անյաջող նա հասկանում էր, որ իւր տգեղութիւնն էր դրա արգելքը, հասկանում էր և համբերում։

VI.

Անցան տարիներ, և հայրուստ, վաշխառու Սագօն զգաց իւր ոյժը։ Նա հասկացաւ, համոզուեց, որ այժմ աղջիկներից ամեն մէկը ուրախութեամբ կրդառնայ, իւր կինը։ Բայց նա միսեց ջոկել ապասել այժմ նրա պահանջները աւելացել էին։ Նա կամենում էր ջահիլ կին, լաւ կին, լաւ տնից, ոգով նամուսով։ Նա մինչև անգամ ընտրել էր մէկին և սպանում էր մի պատեհ առթի, որ ուղարկէ աղջկայ հօր մօտ ինամախօսներին։ ինկ մինչ այդ նա ձգել էր գործի մէջ իւր բարեկամ տէրտէրին։ Տէր Պօղոսը, իբրև ոչ պաշտօնական մօցիքուլ, պիտի պատրաստէր այն ասպարէզը, ուր պիտի գործէր յիտոյ ինքը Գասպարինց Սագօն, — և տէր Պօղոսը թափառէմ էր ամեն ջանք։ Գործը հետո չէր նա պահանջում էր խելք, համբերութիւն, աշխատանք։ Տարգի նէր Պօղոսը։ Նա արդէն մի քանի անգամ կարծես, բոլորովին անգատակ բացել էր աղջկայ հօր հետ այդ խօսակցութիւնը գովել էր կարողութեան չափ հարգելի նէր Պօղոսն։ Էր նրա հօր, «լեզուի տակին» ը — ինչպէս ինքը տէր Պօղոսն։ Էր ասում։

— Գիտե՞ս, բալաջան, — ասում էր նա մի երեկոյ նատած Սագօյի տանը սեղանի առաջ, ուր ուրախ ուրախ եփ էր գալիս ինքնառու, — գիտե՞ս, այստեղ մի արգելք կայ, բայաջան (տէր Պօղոսը միշտ այդպէս էր անուանում Սագօյին), մի

արգելք կայ, որ ծնողները հեշտ չեն բաժանուիլ աղջկանից:

Եւ նա առանց շտապելու մօտեցրեց իւր իւղալի կարմիր շրթունքներին թէ յի բաժանի մի քանի անդամ ուժգին փշեց, տալով իւր շրթունքներին զրոյի ձև, ձգեց շաքարի կտորը բերանը և կամաց կամաց խմելով, շարունակեց իւր խօսքը.

— Նմի էդ ա, որ ծնողները կը կամեն տան փեսայ առնել ալսր մինուձարն է:

— Յետք, — Հարցրեց Սագօն:

— Նմի տեսնում ես էլի, — փետք վերջին անգամ իւր զրօյանման շրթունքներով տէր Պօղոսը, — տեսնում ես, որ արգելք կայ: Բայց ես շատ աշխատեցի համոզել հօրը, ասացի, թէ Սուրբ Գրքումն էլ գրուած է՝ «կանայք արանց իւրեանց հետեանց հետեանցն», ասացի, թէ խօ աղջիկդ կրկին մեր գիւղումն է լինելու, միշտ կրտեսնուէք:

— Իսկ նաև, — Հետաքրքրուած Հարցրեց Սագօն:

— Է՞հ, ում ես ատում: Էլի իւր էջն է քշում Զէ, չ՛ու չէ: մեր ուսին խօ գիտե՞մ: — Խօսքը նուռիկի մասին էր:

— Բաս ի՞նչ անենք:

— Համբերնք, բայտաշան, համբերութիւնը կիանք է, ասում է Դանիէլ: մարգարէն, տեսնենք, վերջը ի՞նչ կրլինի:

Սագօն ընկաւ մտատանջութեան մէջ, նա գիտէր, որ այդպէս է պատասխանելու աղջկայ հայրը, գուշակում էր այդ և որոնում էր մի ելք այդ անելանելի գրութիւնից գուըս գալու: համար: Նա վախենում էր նուռիկին թողնել իւր ձեռից: նրա երիտիք ծումառուկուց երևում էր, որ այդ դիլեմման, այդ համերուկը մաջում է նրա թոյլ մտածողական ոյժերը:

— Հ՞ո, ասում ես գամբելենք, տէրտէր-ջան, բաս թէ փախաւ ձեռներիցս... Ի՞նչ կ'անենք այն ժամանակ... Ես խօ ուզում եմ նուռիկին...

— Փախաւ... ո՞նց թէ փախաւ, — Հարցրեց տէր Պօղոսը, սրբելով մեծ կարմիր թաշկինակով իւր փառաւը մօրուքն ու ճակատը:

— Հենց այնպէս... եթէ ուրիշը ուզի նրան:

— Պահ, տնաշէն, հանաք ես անում, թէ ղորթ ես ասում: Ախր մի լաւ նայիր շուրջդ. ով կայ մեր գիւղում: Մի ցոյց տուր մէկն, քեասիրը խօ չի ուղի ուկսի աղջկանը:

— Ո՞չց թէ ով էկսր հարուստի է; կարող է քեասիրն էլ տալ իւր աղջկանը:

— Եղ ի՞նչեր ես դուրս տալի, Սակո-ջան, ախր մի մտածիք: լսուած բան է, որ Հարիւրներով պսակ ևմ կատարել

ու էդ թաւուր բան չեմ տեսել: Զէ, չէ, բալա-ջանց հանդիսաւ կաց, աղջիկը մերն է ու մերը: Վոազելու բան չկայք համբերնք, գործը կրշինուի ինքն փրան:

Տէրտէրը գարբակեց իւր պեցերորդ բաժակը: Կաքնանոր մարելու վերայ էր: Սագօն լուռ գլուխը ձգել էր սեղանին և մտածում:

— Այդպէս, բալա-ջան, այս շաբաթի կրշինենք գործդ ու ցինը կրվիւրջանայ, ծիծաղից տէրտէրը, ժամի տուեցի Սագօնը ուղինչ շպատանիւնեցի:

Այդ րոպէին նուռիկի պատկերը կենդանի կերպով կանդնած էր նրա առաջ, նա տեսնում էր նրա աշքերը, ժամիտը, երեաը:

Նուռիկը հրապառուղում էր նրան իւր կուսական դիմի թարմ գեղեցկութիւնով: Սագօն գդռամ է անգամ նրա կայութիւնը: ահա նրա մերկ, գեղեցիկ մարմինը, գուրծքը, նրա կրակոտ աշքերը: և այդ մարմինը անվաճակ քարշում է նրան դէպի ինքը, նա զրգում է նրան:

— Նուռիկ, դու իսր կրշինինաւ անզատձառ իմ, ինձ Սագօ են ասում, Գանգարինց Սագօ, — մի խուլ ճնշուած ձայնով շշնջեց Սագօն և պինդ զարնելով սեղանին, վեր կացաւ տեղից տէր Պօղոսին ծանապարէ ձգերոււ ինկ ոյքառմ արդէն մթնել էր, գեշերը տարածել էր իւր մե քօղը աշխարհի վերայ և փոքրիկ Ն գիւղը կամաց կամնց ընկցիք վում էր հանգիստ քնի մէջ:

VII.

Գիշեր է:

Պարզ գումբուխտեայ երկնակամարում հանդարտ լողում է լուսնեակը: Նրա մեղմ լոյսը սփռուելով վոքրիկ և գիւղի վերնց, ընկնում է գիւղից գուլա, դաշտայն անհուն, լայնածաւալ տարածութեան մէջ և, համնելով սարերի ստորոտներին, բարձրանում է սրածայր, երերուն ցոլքով մինչև նրանց բարձրաբերձ զագաթները և կորչում է եթերային կապուտակ մթնոլորտում: Իրեւ ստուերներ երեւան են գալիս սարերում մութ ձորերը, անդունդները, անցքերը և իրենց մթութիւնով աւելի պարզ, աւելի նշմարելի են կացուցանում լուսաւորուած մասերը:

Անշարժ է գիշերուայ պարզ թափանցիկ օդը, անշարժ են երկարածիգ սօսիները, և ուռիները, անշարժ է շինարը, անշարժ, կարծես, քարացած է ողջ անտառը: Քամու նշոյլ անգամ չկայ: Բնութիւնը լուռ է: Սյդ շքեղ հարաւային բնութիւնը, կարծես, անոյշ նիվհում է գիշերուայ կրքոտ, ջերմագին գգուանքների մէջ: Երբեմն երբեմն միայն մի ինչ որ անորոշ հնչեւն, մի ձայն յանկարծ ընդհաւառում է այդ խորհրդաւոր լուռթիւնը և իսկցին լառում է հեռու, հեռու գիւղից գուրու: Երբեմն երբեմն միայն քամու ալիքը խփուամ է ծառերի անշարժ կախուած թերթիկներին, կարծես, իւր համբոյն է տալիս նրանց և քանդարացնելով մի բոսպէ միայն նրանց խուլ սոսափիւնը, կորչում է անհուն տարածութեան մէջ:

Գիւղի ծայրում համարեա ամենավերջը, գտնվում է Հասոյի խրճիթը, դա մի փոքրիկ գետնափոր տնակ է, որ ժամանակի մաշող ժանիքների ազդեցութեան տակ կռացել, քայքայուել է և համբերբւթեամբ սպասում է իւր օրհասին: Նրա տափարակ: Հռոյէ կտրի վերայ բուսնում է արօտ, այդտեղ ծիծառը մեծացնում է իւր փոքրիկներին այդտեղ ամրանը անց է կացնում իւր ժամանակը և Հասօն նա այժմ

էլ ծալապատիկ նստած է այդտեղ և տրուելով իւր կոշտ, սեացած ձեռներում իւր անբաժան քոլոզը, ատամների միջեց մի ինչ որ երգում է: Նրա միաքը պտտում է շատ, շատ հեռու, նա չէ լսում, չէ հասկանում անգամ իւր երգածը: ահա քանի օր է նրա ուղեղը չէ գալդարիլ գործելուց: Մի հարց միշտ զբաղեցնում է Հասօն: նա աշխատում է մարսկը պարզել իւրեն տանջող այդ միտքը—բայց իզուր: Նրա մտածողութեան ընթացքը խառն ու շփոթ է: Մտքերը հետևում են մրմեանց առանց ներքին կապակցութեան, առ կանոնական առանցքի, յանկարծ անցեալ օլուայ մի աննշան փաստից յիտոյ Հասօն յիշում է իւր մանկութիւնը, իւր տղայական խաղերը և կամ մօր պատմած արկածները: Անցնում է մի քանի ըստի, և նրա ուղեղում արդեն ծագում են նոր մտքեր, նոր յիշողութիւններ, ահա մեզմագին կարկաչում է վտիտ աղեիւրը, ահա նուռիկը սափորը ձեռին կանգնած է այնտեղ և ջուր է առնում լուսինը շեշտակի խփում է նրա երեսին՝ որբան չքննաց է: որբան գեղեցիկ է այդ երեսը—ահա նա ձայն է տալիս հասօն: նա մօտենում է նրան և իւր մինչև արմունկը մերկ ձեռներով փաթաթվում է Հասօն վզով: Գիշերուայ լողութիւնը ընդհատվում է նոցա ջերմ, ոգուածին սիրյ համբոյը հայնով:

Ի՞նչ է դա, երանց ցնոնքը, թէ... թէ Հասօն չէ սիրավում և այդ ամենը այս լոպէիս կատարվում է նրա աչքերի առաջ: Կամօն կամաց սթափվում է:

Ցնողների և երազների աշխարհը փշռվում է:

Նա պինդ տրորում է իւր ճակատը, ուղղում է իւր դանդուր և մազերը և գանգաղ վեր է կննում տեղեցը: Նա կանգ է առնում մի բոսպէ կտրի վերայ, ձգում է իւր մելամազը թախծալի հայեացքը պարզ պառնային երկների վերայ, նայում է լուսնեակին, աստղերին, արծաթափետուր ամպերին և կտրից գանդաղ ցած է: իջնում:

Նոցա կրծթի երգիկից օղակաձև քուլաներով բարձրա-

նում է ծուխը. Ոսկեհատը կանգնած թռնրի մօտ մի ինչ որ եփում է. Հասօն լուռ մտնում է ներս, լուռ համում է իւր արխալուղը և նոյնպէս լուռ նստում է թռնրի մօտ:

Պառաւ Ոսկեհատը ձգում է իւր դեռ փայլուն, միշտ վազվող հայեացքը նրա երեսին:

Խրճի մի անկիւնում շարժվում է մի ինչ որ կենդանի բան. մերթ ընդ մերթ այնտեղից լսվում ին թշոյ անդօր ձայներ, — զա Հասօյի գառնուակն է: Նա նոր լոյս աշխարհ է եկել: Գեռ երեկ Հասօն այնպէս քնքշաբար նայում էր դառնուկին, հոգում էր նրա պէտքերը, փաղաքշում էր նորան, իսկ այսօր ուշադրութիւն անդամ չէ դարձնում աղերսագին բառաշղղ գառնուկի վերայ:

Պոպէները անցնում են վիականար լուռթիան մէջ:

Թռնրում այրուող փայտերը, մի աղերսագին ճրթճռթուցով փշշւմ են, ճայթում են, կրտրատվում են և թողնելով կայծերի հրեղէն մի կշյտ՝ ծածկվում են թանձր մոխրով: Սյդ մոխրի մակերեւոյթին խաղում է կապտագոցն մարտղ կրակը և մոլի, շարժուն ցուքելով երեւում է դէս ու դէս:

— Լմի՞ր, մայր, — յանկարծ ձայն տուեց Հասօն, — դու ինձ պատմում էի՞ր թէ Հայրս ժամանակով ոչս է եղած պյանտեղ մեր Հայրենիքում: ղղիթ ա...:

Ոսկեհատը նախ երկար նայեց Հասօյի անգունացած երեսին և յետոյ արդէն պատասխանեց:

— Հա, եղած է, որդիքան, ինչի ես հարցնում:

— Եւ, էնապէս:

— Զէ, ասա:

Եւ Ոսկեհատը մօտեցաւ Հասօյին:

Վերջինը պինդ սեղմել էր իւր նեղ շրթունքները. Հեղնական ժպիտը տխուր խաղում էր այդ շրթունքներին ծալքերում:

— Հ՞ր, ինչի՞ ես հարցնում: Ի՞նչ ասում է ինչ սեղմել էր նրա համար, որ ես էլ կարողանամ պարծ-

նալ հօրովս, որ իմանան ուրիշները, թէ ես էլ հասարակ, վարձկան հովիւ չեմ, այլ ուեսի որդիի:

Եւ նա պինդ ծիծաղեց: այդ ծիծաղը սառն էր և շինծու:

Ոսկեհատը կրկին անհանգիստ նայեց նրա երեսին:

Կարօն ասում է, — շարունակեց, կարծես, ինքն իրեն Հասօն, — որ այստեղ, Դ, գիւղում ոչ մի մարդ չէ տալիս իւր աղջիկը հովուին: Հա... Կարօն այդպէս ասաց. իսկ ես.. ես չեմ հաւատում:

Ոսկեհատը վայր դրեց ձեռի ամանը և սկսեց մտիկ տալ Հպաօյին:

— Չեմ հաւատում, ախր եթէ աղջիկը սիրէ ինձ, նա կորապնայ: իմ կինը. լինի դա հենց ուեսի աղջիկը: Ախր ով կարող է գուով տալ ուրիշին, աղջկանը, նա խօ ինձ է սիրում, էլ ինչ:

Եւ նա յանկարծ անգօր լուց: Թռնրում կրկին ճրթճռթացին այրուող փայտերը:

— Ինչո՞ւ ես այդպէս խօսում, Հասօնան, նկատեց մայրը: Որդին լուռ նայեց իւր մօր խորշումած երեսին:

— Հ՞ր, պսա, ասա, որդիքան, նկատեցաւ Հասօյին և սկսեց քնքշաբար շոյել նվա խիտ մազերը, Հ՞ր, պսա, բալթան, պսա, իմ աշքի լոյս Հասօն:

— Ինչո՞ւ, — նկատեց մի յուղուած ձայնավ Հասօն, — ինչո՞ւ, նրա համար, որ ահա քանի ամիս է քո խեղճ Հասօն քուն չունի. նրա համար, որ Խաչքարի ուխտի օրից սրտովս ամեն օր արիւն ու լեղի է գնում: նվա համար, որ այս սիրտը խոցուած է, մայրիկ քան, հալ ու մաշ է եղած... Եւ պրտասուքի հեղեղը ցայտեց Հասօյի աշքերից:

Այն, հոգեկան ծանր քիոք, որ ամիսներով ծանրացել էր նրա սրտին, այժմս, թէթեանում էր վազող պրտասուք նկրի. հետ միասին: Լացը մեղմացրեց նրա սրտի կոկիծը. խուլ հեծկլտանքները ախուր հնչում էին սենեկի թռութեան մէջ:

— Դու ուզում ես մէկին,—շնջեց Ոսկեհատը:

— Ուզում եմ... աւելի, մայրիկ,—ես սիրում եմ նրան:

Այս բոպէին անգամ տեսնում եմ ես նրա պատկերը. Այս, նա կանգնած է սօսենու տակ և ձայն է տալիս ինձ: Այս, մայրիկ-ջան, ես ուզում եմ: Իսկ որքան է սիրում նա քեզ. ես շատ եմ պատմել նրան քո մասին, ասել եմ թէ որքան բարի ես դու և որքան անբաղի ես. պատմել եմ նրան մեր հայրենիքի, մեր և—շնչի մասին, մեր անցեալ կեանքի, մեր կրած շարչարանքների, լացի մասին: Այս, մայրիկ-ջան, մայրիկ-ջան, ես պատմել եմ նրան, թէ ինչպէս քրդերը սպանեցին հօրս և ինչպէս նոյեմզար քրոջս քշեցին Պարսկաստան. Խօ այնտեղ է նա: Այս, եթէ դու տեսնէիր, ինչպէս լաց էր լինում նա... Նա, մայրիկ-ջան, սիրում է մեզ բոլորիս, նա խոստացաւ դառնալ իմ կինը:

Ոսկեհատը շուտարած լսում էր Հասօյի անկեղծ խոստովանակքը:

— Հա, մայրիկ-ջան, նա սիրում է, և դեռ Կարօն ասում է, որ նրան ինձ չեն տալ: Այսօր գիւղում խօսում էին, թէ ինչպէս սարսադ Սագօն խնամախօսները է ղոփել նրա հօրմօտ և ինչպէս մեր ուժար տնտել է իւր խօսքը:

— Ի՞նչպէս, դու, դու, Հասօ, ուզում ես նուեկիլին:

— Հա, մայրիկ-ջան:

Հասօն վեր կացաւ տեղից և իրրե անդրի կանգնեց մօր առաջ և հաստատ կրկնեց.

— Հա, մայրիկ-ջան:

Վայրինի բնութեան աւելի վայրինի; անտաշ որդին խոստովանում էր իւր՝ առաջին մէրը լինելիքին, ջերմ կրակը վառվում էր նրա լայն բացած աչքերում, արիւնը խփել էր տաքացած երեսին և ներկել էր վերջինը մի ալ վարդի գունով: Նա հպարտօրէն բարձրացրել էր իւր գլուխը, անվախ վկայում էր իւր սէրը և չէր ամաշում իւր արարքից:

— Հասօ, որդի-ջան, այդ Ի՞նչեր ես խօսում:

— Ի՞նչ—հարցրեց Հասօն միայն:

— Ախր ուսը Հարուստ է, անուանի, իսկ մենք...

— Իսկ մենք աղքատ. բայց երիտասարդութիւնս, ցիժերս, աշխատանքս. այդ ոչի՞նչը հի՞, ես կրանեմ: օր ու գիշեր կրանեմ: Ինձ խօ կրտան մի թիզ հող. ես կրցանեմ, կրվարեմ, և մենք նուռիկի հիտ քաղցից չենք մեռնիլ:

Ոսկեհատը տիրապին ժպտաց:

Նրանում խօսեց այդ բոպէին դառն փորձերի ձայնը:

— Դու մոռանում ես, Հասօ, — նկատեց նա մի բոպէից, — դու մոռանում ես, որ ուսը նամուսի, ամօթի խաթրի չի տալ իւր աղջկանը քեզ: Ի՞նչ կ'ասէ զիւղը, ժողովուրդը. մասխարայ լինել ուրիշների առաջ նա չի ուզել. խալնի բերան ընկնելը լաւ չէ, որդի:

— Ախր նուռիկը սիրում է ինձ:

— Սիրում է, ով է նրան հարցնողը:

— Կարօն է այդպէս ասաց, դու էլ մայրիկ և այդ լաւ է, ճշմարիտ է: Ասա, մեղք չէ, մի՞թէ այդպէս է լինում աշխարհում, մի՞թէ մարդիկ այդքան անխիղք են: Տես, ոչխարհներս, անտառի գաղանները, թռչունները, նոքան անգամ սիրում են իրենց ուզածին: Մի՞թէ մարդիկ վատ են գաղաններից: Մայրիկ, մայրիկ, դու էլ, Կարօն էլ այնպէս չէք խօսում: չէ, չէ...

Մարդիկ, մարդիկ, — շնջեց դառն հեղութեամբ Ոսկեհատը, — մարդիկ, այս, նոքա վատ են գաղաններից, որդի, նոքա սպանեցին քո՛ հօրը, նոքա թշուառեցրին մեզ. Իսկ ի՞նչ արին քրոջդու:

Եւ վաղեսի, տինուր յիշղութիւնները զարթեցին պառաւ Ոսկեհատի ուղեղում: Այդ լեռնական Հայ կողմ մէջ չկար ծիշտ հայկական, հլու, ստրկական համբերութիւնը: Այդ գաղթականը, որ օտար հողի վերայ գտել էր իւր ապաստարանը, գիտեր և սիրել և ատել: Վրէժինդրութեան ողին դեռ չէր մարել նրանում: մի օր նա յոյս ուներ առ-

նել իւր վըէժը թշնամիներից: Նա հաւատում էր, որ այդ օրը երբ և իցէ կրգայ:

— Ասիր, Հասօ, մարդիկ անխիղջ են—ես լաւ եմ ձանացում նրանց. եթէ նոքա տեսնեն քեզ ընկած ձանապարհին՝ հիւանդ քաղցած, ծարաւ, օգնութեան փոխարէն կ'անցնեն վրայովդ. այդպէս են մարդիկ: Ատիր նրանց, ատիր ամենքին. թող այդ երիտասարդութեան ցնորդիդ, այդ սուտ մէրը: Սէր թողել է մեր աշխարհը. նա չկայ, մնացել է սուտը, լացը և անէծքը: Գնանք այստեղից, գնանք մեր հայրենի և—շնոր, համբուրենք նրա սուլր հողը և վըէժներս առնենք մեր թշնամիներից: Ես կրգամ հիւանդ, ես պառաւել եմ, ուժից ընկելո. բայց կրգամ հիւանդ. թող իմ ոսկորները հանգեն մեր և—շնոռմ գնանք, Հասօ...

Սլեզարդ մազերը արձակած, կանգնած, էր Ոսկեհատը թոնվի մօտ, կանգնած էր անշարժ: Կրակի բոցը լուսաւորում էր նրա հողագոյն երեսը, լայն, ուռած երակները և խորշումած ձակատը մի կարմիր բոցեղին լուսով. սուր փոսփորային կրակը ժայռում էր նրա լայն բացած, մի կէտի ուղղած աչքերը. Այդ դրութեան մէջ Ոսկեհատը յիշեցնում էր պառաւ. վհճակներին, որպէս կանգնած խարցիների առաջ, պարագործում են իրենց հմայրւթիւնը:

Ոսկեհատը դողում էր: Այսքան տարի պահած, լռած ոխը յանկարծ երեւան, էր եկել և պահանջում իւր կատարումը: Հին ցաւերը նորագուել էին:

— Ասում ես, Համօ, գնանք և... Միրզա-բէյի արիւնը կրփոխարինէ Մրտօյիս արիւնը: Ա՛խ, Մրտօս, Մրտօս. քո առանց գերեզմանի և տուրը թաղման մնացած հոգիդ վերջապէս կրհանգաւառոյց, էլ նա չի թափառի. մութ գիշերները: Գնանք, գնանք մեր և—շնոր, Հասօ:—Եւ Ոսկեհատը յետ ձգեց իւր արձակած մազերը և ուղղեց իւր սուր, համարես. անմէտ հայեացքը Հասօյի. կողմը: Նա, կարծես, չէր տեսնաւմ իւր որդուն:

Իսկ Հասօն լուսն շուարած նայում էր նրան: Նա առաջն անգամ էր տեսնում իւր մօրը այդ գրութեան մէջ. Նա չփիտէր, որ երկար, քսան երկար տարիներ վըէժինդրութեան միտքը չէր թողել պատաւ: Ոսկեհատին: Նա չփիտէր, որ նա գիշերները ցնորուածի պէս վեր էր կենում և, դուրս գալով խրճթից, ակսում էր կարդալ իւր կատաղի անէծքը. Նա չփիտէր, որ ժամանակին ընթացքում այդ միտքը դարձել էր Ոսկեհատի ուժը այն ժեկը, որ կասպում էր նրան կեանքի հետ: Եւ այժմ, երբ նա տեսան, լսեց մօր խօսքերը, նրա յորդուը, նա զարմացաւ, թէ որքան կամքը ոյժ և զօրութիւն է մնացել դեռ այդ թոյլ պառաւած մարմնի մէջ. Նա արիւն է, անձկում, արիւն և վրէծ:

, — Բայց ի՞նչ կրգայ մեր ձեռքից մենք երկօւսովս ենք միայն, — նկատեց Հասօն մի անհատատ ձայնով:

— Ի՞նչ ամաչի ր, ամաչի բ, ուէսի որդի: Հեռու, հեռու ինձնից, թուղամորթ. դու իմ որդին չես, դու վախում ես քրդերից: Հեռու, թէ ոչ իմ մայրական անէծքը կըթափուի գլխիդ, — եւ Ոսկեհատը բարձրացրեց իւր ոսկերդ, չորացած ձեռները դէպի երկինքը: — Ի՞նչ և դու, դու... Հայտնում ես. մենք կրսպանենք. Միրզա-բէյին, մենք կրիսմենք նրա տաք տաք արիւնը: Ո՛հ, խա, խա, խայ, ի՞նչ շաւ կը լինի: Մրտօս հանգիստ կրքնի յաւիտենական քնով, էլ չի վրդովիլ նա ինձ երազում, էլ տիսուր չի շալրդիլ իւր արիւնու գլուխը Ամ, Միրզա-բէյ:

Եւ խելագար պառաւի ծիծաղը հեռու տարածուեց գիշերուայ լուութեան մէջ: Այդ սուր, երկարատև ծիծաղը սարտուռ ձգեց Հասօյի վերայ:

— Մայրիկ, մայրիկ, ի՞նչ ես ասում, հանգստացի ր: Ոսկեհատը սարսափած յետ քաշուեց խրճթի մութ անկինը. կարծես, մի զարհուրելի տիսիլ երեց նրա աչքերին:

— Ամ, կրկնին, կրկնին այստեղ ես, Միրզա-բէյ, դու այս տեղ էլ հանգիստ չես տալիս խեղճ Ոսկեհատին. Հեռու,

Հեռու ինձնից, մարդասպան. կորի՞ր, գնա՛, տե՛ս, այնտեղ
մշուշի մէջ կանգնած է Մրտօս: Դու սպանեցիր նրան, նա
սաստում է քեզ. տե՛ս, արիւնը կաթ-կաթ վազում է նրա
գլխից.... Հեռու, հեռու Միրզա-բէյ: Ոսկեհատը մենակ չէ.
Նա մեծցրեց օտարութեան մէջ իւր որդուն. Հասօն այստեղ
է. Հասօ, Հասօ,— ճշաց Ոսկեհատը, — օդնի՞ր, օդնի՞ր ինձ,
Միրզա-բէյը խեղդում է, խեղդում է մօրդ:

Հասօն վազեց նրա մօտ, բռնեց նրա ձեռից, և մի ակնթար-
թում Ոսկեհատը սթափուեց:

— Կրկին, կրկին այս զարհուրելի երազը... Ի՞նչ ասացի
ես, — հարցրեց նա թոյլ Ճնշուած ձայնով:

— Ո՞չ, ո՞ւր եմ ես, ինչպէս ուժգին շուացնում է քա-
մին. ցուրտ է, ես մրտում եմ:

— Մայրիկ, դու վրէժ էիր պահանջում:

— Վրէժ. ո՞չ ո՞չ դա ցնողք է, երազ որ ժամանակ ժա-
մանակ տանջում է ինձ... Սյաօր լուսնի նորն է, երևի.
մոռացի՞ր, որդի, իմ խօսքերը, մի՛ յիշեր այլ ես:

— Եւ նա ծանր կերպով հառաջեց: Հա, ես մոռացայ...
Էխ, պատաւել է խեղձ Ոսկեհատը, մոռացկոտ է դարձել...
Հա, դու ասացիր, որ նուռիկը սիրում է քեզ...

Հասօն ոչինչ չպատասխանեց: Հա, առ մոռացայ...
— Հա, այդպէս.. լաւ է, լաւ.. իսկ ուսը. նա կըմերժէ
քեզ, նա հարուստ է. իսկ մենք, մենք... դու..

Եւ Ոսկեհատի ճայնը յանկարծ կարուեց. նրա աչքերի
ծանրացած կոպերը փակուեցան, տաք քրտինքը ծածկեց
նրա մաշուած, կնճիռներով պատած երեսը, մարմինը, և
նա անզօր ընկաւ Հասօյի ձեռների վերայ:

Կրկին խրճթում տիրեց լոռութիւն:

Իսկ թոնդում կրկին ուրախ ուրախ այրվում էին կրա-
կած, սեացած փայտերը, և կրկին մոխրի մակերւոյթին
խաղում էր կապտագոյն, մոլի կրակը:

VIII.

Գիւղում Ճշմարիտ որ սկսել էին խօսել Սագոյի ապագայ
ամուսնութեան մասին. իբրև հարսնացուի տալիս էին նու-
ռիկի անունը: Օրէ ցօր այդ լուրը աւելի և աւելի տարած-
վում էր գիւղական հասարակութեան մէջ և վերջինը ար-
դէն համարեա համոզուած էր, որ դա մօտակայ ապագայի
փաստ է: Նատերը ախտոսում էին, որ նուռիկը արդէն ծե-
րացած վաշխառուի ճանին է ընկնելու, շատերը, ընդհա-
կառակը, երանի էին տալիս նրան և անմիջապէս սկսում
էին հաշուել Սագոյի հարստութիւնը, և համարեա ամենքը
նախանձում էին նուռիկին, նախանձում էին նրա բազգա-
ւորութեանը: Այդ լուրը, որ վերջին ժամանակ դարձաւ
ամբողջ Նո գիւղում առօրեայ զրոյցի, «ասէ-կօսէ»ի նիւթ,
հիմնուած էր մի անուրանալի փաստի վերայ: Նատերը տե-
սել էին, ինչպէս տէր Պօղոսը եկել էր ուսի տունը, երկար
մնացել էր այնտեղ և դուրս գալիս ինքնաբաւական կերպով,
ուրախ ուրախ շինել էր իւր ձեռները: Այդ ամենը այնպիսի
փաստեր էին, որ երկրայելը աւելլրդ էր անգամ: Ինչու ապա
տէրտէրը շինեց իւր ձեռները այն էլ ուրախ ուրախ. Խօ
տէրտէրը ի զուր չի անիլ այդ: Եւ գիւղում ամենքը համոզ-
ուած էին, որ եթէ տէր Պօղոսը շինել է իւր ձեռները,
ուրեմն անպատճառ մի բան կայ և այդ «մի բանը» զրա-
դեցրեց ամենքին:

Տէր Պօղոսը իրաւ գնացել էր ուսի մօտ, համոզել էր
նրան և նրանից խօսք էր առել. ծերունի ուսը տալիս էր
իւր աղջիկը Սագոյին:

Եւ Գասպարենց Սագօն անշափ ուրախ էր. նա առատա-
պէս վարձատրեց զօշազ տէր հօրը: Սուանց նրան Սագօն հա-
զիւ թէ կարողանար գլուխ բերել այդ դժուարին գործը:
իսկ այժմս նա հասել էր իւր անձկալի նպատակին և զգում
էր իրեն երջանիկ, բոլորովին երջանիկ:

Երջանիկ էր և զօշաղ տէր Պօղոսը. նա ստացել էր իւր «ժամոցը» և բացի դրանից Սագօն խօսք էր տուել բարեխօսել բարեկարգը՝ առաջ տէրտէրի միքանի պաշտօնական ակներեւ զեղծութեանի մասին: Եւս այսպէս այս փոքրիկ պատմութեան Անջ գործող հերոսներից շատելը բաւական և երջանիկ էին: մինչու նուժութիւնն էր, որի սրտով արիւն: էր զնումը. Այս կյալուուր լուրկրից որոնք հասնում էին նրա ականջին. նա վարչակում էր իւր Համար մի անքաղցութիւնն: Նեռակողելութիւնը չի մայած նաև տանջվում էր և նրա սիրտը կմշիտվում էր տանրա այս վերջին օրերս շաբ են փափառմ: Ապօյի մամին այդ ի՞նչ է...! Ի՞նչու այդպէս շուտ շրջում նրան անունը. Սյոյ Հալոցը օրի քանից ծագում էր նուժութիւնութեղում: և պանջում էր նրան: Նրա ներքին անգործ աշխարհը պղտորուած, տակն ու վերայ էր նղած կիանքի կամքնառու հոսնքը՝ դռւմ: էր նկել ափերից և ընտրել մի նոյն արտուիի շաւիդ: Ոչ ոք չի արա մօտ, որի առաջ նա կմրտղանար յայն ներ դադարիցը, իւր մուքերը որին նայ կարտղանար յայն տալ իւր խոցուած, յաւող տիրտը նաև վրեւ չեր Համայն ձակուիլ խօսելու այն մասին, որի ճերունի հօր հետ, իսկ մայրը այս վերջին օրերս ակներեւ խորշում էր, որ և իցէ բացատրութիւններից: Եւ Նեռակողը մորմ էր, թօլորուվին մնակ: անը և ոչ մուռ մատիւրուն: Եւս անգամ նրա մոդումն անցնում էր նաև նատարած անցուածը. յաւող տիրտը նաև վրեւ չեր Համայն ձակուիլ խօսելու այն մասին, որի ճերունի հօր հետ, իսկ մայրը այս վերջին օրերս ակներեւ խորշում էր, որ և իցէ բացատրութիւններից: Եւ Նեռակողը մորմ էր, թօլորուվին մնակ: անը և ոչ մուռ մատիւրուն: Եւս անգամ նրա մոդումն անցնում էր նաև նատարած անցուածը. յաւող տիրտը նաև վրեւ չեր Համայն ձակուիլ խօսելու այն մասին, որի ճերունի հօր հետ, իսկ մայրը այս վերջին օրերս ակներեւ խորշում էր, որ և իցէ բացատրութիւններից: Եւ Նեռակողը մորմ էր, թօլորուվին մնակ:

Եւս անգամ նրա մոդումն անցնում էր Նատարած: նա մուգերում էր այն երեկոն, աղքիւդիր մօտ, երբ առաջին անգամ նրա սիրտը բարակնեց տուիր սիրոց առաջին անշեց կրակով, երբ առաջին անգամ նրա անմեղ, կուպական շըթունքները այրուեցին. Չիս համբոցըներից առայս պահանձուած էր:

Ցիշեց այդ ամենը Նուրակիր և նրա արտի խորքում մի բան սասմակի, ասուր ցամացը նշ էր այդ մի՞թէ նա մնաս բարեւ էր ասուր իւր երջանիկ անցեալին, իւր ոսկի խորութեամբ երազներին. մի՞թէ նա մոռապութեան էր տալիս իւր

մէրը, գգուանքը, փաղաքչանքը. մի՞թէ նա մոռապութեամբ սիրելի Կամօին, և այսպէս վաղ նրգում է բերավերջին, Համաժարական ողբը: Ոչ, ոչ, նուաչիկը դիու ցիշումնէ: և այդ անցեալը, նա գետ ապրում է, այդքանց անցեալը դիմուլքների էր, խռոտանում էր նա: Եւ ահա միքամբէ ապրում վարդնել այդ ամենը, կորցնել յաւ լիտեան... Ո՞վ է նա, որի անկոչ օտար, ձեռլու ցանդգում: է փշուլցնուքների այն լրասառութաշխատը դով ապրում էր Նուանիկը, ո՞վ է նա սուրաննապահեիկ կերպով խորտակում է փայփայած, սիրած յօյսերը: Ո՞վ է նա սունված Այդ միտքը անդասիրում ժագում է Նուռփկի ուղիղում:

Զինիթէ Ապօն էր արրսափած խոստվանում է նա ինքը բուին, այդ անշատը հք Սագօն, Ապտուած իմ, մի՞թէ նա է, մի՞թէ իմ ծնողներս այնքան անսկրս են: որ կը հանեն, կը տան ինձ նրան, աղդ խեղճերի արիւնը ծծող Սագօյին: Զի չինձ կը մերցանքան, հսկիք սիրում իմ արդեն, սիրում հմանգիշինը յարակը ուրի ձնարարութ ու ձնաբան: Եւ նա ծանր հարաչում է: այս ու ուղարկուի կամաց ապուած կամաց ապուած է Սագօն, պառակ Սագօն, Սագօնը Սագօնի Ապտուածիմ: Ան անտաւ զառանցանքի, Անջ վակում է իւր արտասուալի աչքերը և անձնատուր է լինում իրեն յուղող տանջող մտքերի քառսին:

— Սարսաղ Սագօ, — մտաբերում է նա յանկմաք: Հասցի ինօքեցը և արտասուալի ապուած: Մավտամատար անտաւ մասուաւ իւր ապսոն և Սագօնցերը և երիամսաբարզը հա, հա, հա, ծիծացում: է նա մի անգական ցանցըզական ելւեջներով: Սագօն... իսկ ոլքան զեղեցիկ է իմ Հանսօն, իմ սիրելիս, իմ աշքի լոյս, Լասօն: Արէին սենեկի շուտթեան մէջ պակում է: Առութիկի Հինանզոտ, ներդայնին, ծիծացաղութ և առանգութ է: Հօրիզոնը պատելը է մուլթ, մոխրագոյն, ծանր լրացող ամպերով, որոնց ատուերը աւ, անկանոն շըջանակներով ընկնում է գետնի վերայ: Ոչ մի աստղ

Ե ցոլում արձճային երկնակամարում։ Քամին կատաղի սուլում է ամայի փողոցում և բարձրայներով փոշու քուշաները ուժգին խփում է ցանկերին, դռներին և անշներով երդիկի մէջ սկսում է իւր տիսուր, սիրտ մաշող երգը։ Ծառերը կռանում էն գետնին և նրանց տերեները հառաչերով ճրջում են քամու սասակութիւնից։ Երկինքը աւելի և աւելի մժնանում է։

Մօտ մօտ կուտակուած սևագոյն ամպիկում ցոլում է փայլակը, ուժգին որոտում և անձրեի խոշոր կաթիները թրջում էն հողը։ Նուռիկը դուրս եկաւ բակը։

Մի քանի րոպէից մութ, կեղատա ջրի հեղեղը սկսում է կատաղի հոսանքով լցուել մօտակայ ձորը։ Նուռիկը լուռ նայում է նրա ալիքներին։ Եւ որքան նմանութիւն բնութեան այս երեցիթի և նուռիկի հոգեկան տրամադրութեան մէջ այնտեղ էլ այստեղ էլ տիրում է ալէկոծութիւն, բայց կրգայ արդեօք նուռիկի համար վրկարար, կենաստուանձրելու կրպարզուի նրա ապագայի հօրիզոնը, ինչպէս մի ժամից պարզուեց հանդարտուած բնութիւնը և մութ կապցու երկնամարում ցոլաց զիշերուայ վառ, փայլող աստղը։ Կըցոլայ, կրվառուի արդեօք և նուռիկի աստղը։

IX.

Կէս գիշէր էր։

Դ. գիւղի անկանոն, զառիվայր փողոցները դարձել էին մի ցեխ ու ջրի լճակներ։ Այդ խառնուրդը ահազին շրջանակներով փառուել էր այստեղ ու այնտեղ իսկ անձրել դեռ շարունակում էր ջրել առանց այն էլ թաց հողը։ Նրա կաթիները խուլ շվշվոցով հասնում էին գետնին, թափում լճակների մէջ և գծագրում էին նրանց մակերևոյթին երեսներն, միշտ մեծացող շրջանակներ։

Ամեն ինչ թաց էր. թաց էին փոքրիկ, կռացած խրձիթերը, թաց էին ցանկերը, ծառերը, և նոցա թերթիկները

ոլինդ կպչելով միմեանց անդադար վայր էին ձգում անձրեի խոշոր կաթիները։ Երկինքը ամպամած էր։

Երկւում էր, որ շքեղ ամառը գտնվում է հոգեվարքի մէջ։ Նա ապրում է իւր վերջին, հրաժարական օրերով։ Մի քիչ ևս և աշունը կրփոխարինէ նրան, կրդեղնեն ծառերը, տերեները, արօտը, կրչրանայ բուսականութիւնը, կրթառամն գեղեցիկ ծաղկները, կրքնէ խոր քնով թիթեռը, բզեզը, հեռու, հեռու կրթոչի ծիծառը և միայն սև ագռաւը, նստած մերկ ծառի ծիւղնն, կրբարևէ իւր տիսուր կրկառոցով աշնան գալը։ Գիղի հրապարակը գեռ լուսաւորուած է. բաց է մանրավաճառի խանութը, բաց է և օղետունը. սորա գուռը երկար ճրճոցով անդադար բացվում ու փակվում է, ներս թողնելով իւր մշտական այցելուներին։ Մտաւ այնտեղ ահա ժամանակից առաջ ծերացած Գիգօն։ Նա փաթաթուել է իւր հնամաշ ցնցոտիների մէջ և սրթսրթում է. նրա կապտկած երեսը և քիթը, նրա կարմրած, ցաւոտ յօնքերը ցցց են տալիս, որ նա հաքոսի երկապագուներից ամենաջերմեռանդն է։ Նա պիստ սեղմել է իւր ափում մի ինչ որ բան և անհաստատ, թոյլ քայլերով մօտենում է «զաբաղչի» Ասուատուրին։ Ասուատուրը արդէն զիտէ ի՞նչ է ուզում Գիգօն։ Նա առնում է նրա ձեռից փողը և տալիս նրան օղի։ Գիգօն բարձրացնում է լուսին բաժակը, երկար՝ համարեա զմայլած, նայում է նրան և յետոյ, կարծես, մեղքանալով կամաց կամաց խմում է օղին։ Նա քանիցս ախորժակով շարժում է իւր կապտած շրթունքները փակում է կարմրած աչքերը և կրկին խմում։ Գիգօն անտուն, անտէր մի մարդ է. ոչ ոք զգիտէ, որտեղից է նա։ Ահա քանի տարի է, ինչպէս նա Դ. գիւղումն է, նա ամառները զիշերում է Աստուծոյ պատի, այսինքն բաց երկնքի տակ, զնելով գլուխը մի քարի վերայ։ Իսկ ձմեռները, ձմեռները նա անց է կացնում օղետան մէջ

իւր ժամանակը՝ և դրա փոխարէն անում է այս և այն ծառայութիւնները «զաբաղչ» Ասուատուրի մօտ։ Վաղուց այդպէս է ապրում Գիգօն, ապրել է նա այլապէս, թէ ոչ նա չգիտէ անգամ։

Ահա և կուզ Դանիէլը դա բնիկ Նոեի է ամենքը յիշում են, թէ ինչպիսի կարողութեան տէր մարդ էր դա ժամանակով։ Այժմ նա ոչինչ չունի, բացի մեծ, միշտ քաղցած ու ծարաւ ընտանիքից։ Սա էլ առվրձական հիւլմրից մէկն է։ Նա ճանաչում է Գիգօյն, Գիգօն էլ նրան Դանիէլը մօտ 55 տարեկան մարդ է։ Նա խմում է լընու ու մունջ, խմում է շատ, բայց շուտ չէ հարբում։ Նա չէ սիրում խօսել ծիծաղել, նա երբէք չէ ժպտում։ Կրա դէմքը միշտ մոայլ և խոժոռուած է։ Այդպէս չէ Գիգօն նա շատ շուտ է հարբում։ Նրա կազմուածքը թոյլ է օղու գողորշները խսկըն ազգում են նրա վերայ, թմրեցնում են, և նա սկսում է խօսել հրհռալ վիճել ։ Նա սկսում է պատմել ամենքին իւր անցեալը, պատմում է զանազան ծիծաղաշարժ դէպքեր, անցքեր, կրկին խմում է, սկսում է համբուրել ամենքին, մերթ հայշը ում է աշաբաղչու Ասուատուրին, մերթ գովում և վերջի վերջոյ սկսում է լալ լալ բարձրածայն։ Այսպէս է Գիգօն։ Բայց երկու հակառակ բնաւորութիւնները կրկին բարեկամներ են և սիրում են միմեանց երկուն էլ չնայելով այն ահագին զանազանութեան, որ կար դրանց մէջ, վերջի վերջոյ եկել են օղետան դուռը և այստեղ թաղում են իրենց ցաւերը վշտերը յշյսերը և անցեալը։

Այդ օրն էլ Ասուատուրի մօտ կային շատ հիւրեր։ Խօսակցութիւն, ծիծաղ, հայշը անք լսվում էր ամեն կողմից, երբ օղետան դուռը բացուեցաւ և ներս մտաւ Հասօն։ Նորան հետեւում էր Կարօն, Հասօյի ընկերը և դրացին Անձրել թրծել էր նրանց։ Նոքա մօտեցան վառուող բուխարուն Հիւրերը գարձրին իրենց երեսները նրանց կողմը Հասօն և Կարօն շատ քիչ են լինում Ասուատուրի մօտ։

Մի շեշօղի, պատուեիրեց Հասօն և, հանելով իւր թաց քոլողը, սկսեց թափուտալ նրան։ Այսուառ մեր մասն Պինկս, Սայդ կուզը ովքէ, գարձան նրան Կարօն։ — Ո՞րք բարձր է առաջ և առաջ և առաջ ովքը ովք ։ Այդ Սայդն, որ քունջումը նստած է, դա ժամանակով ամենաշարուստն էր մեր գիւղում։ Միօր ընկնաւ իւրդը Սագոյի ձեռը, մտաւ պարտքերի մէջ և ահա մուշտացկան է այժմ։ Տեսնեն, քանի քամնի այդպէսիսերին՝ զրիել է այդ անիծածը, նկատեց Հասօն։

— Եհ, դրա արարքը վերջ չունի մասն ովք ։ Այս ։ Աւելիմն եկող շաբաթ Ասուրիկի հաղանիքն է։ Բաս, Վանանք իմ անում առեւտէրից իմացայ։ Ասածն ոչինչ չպատահանից միայն նրա երեսի գոյնը փուխուց, նա լուս նայեց Կարօնը և միանգամից դարս տակեց իւր բաժակը։ Ա պարագաներ ու առանձին գույքներ ու անուծին ամենամեծ ամեն ։ Ամեն ։ Ամենիմն ամենիկը փախագահ է կիւճիւրից, և նա ծիծաղեց։ Փախանց ինչ ամեն ու այսուհետ ամեն ։ Բաս, Սահօն առաւտուուր ունի զարունակ նույն ։ Մի տար էլեւ ժամ, և մայրու ընկն ունի ու անուստ ու անուստ ։ Ո՞նց թէ չտամի ու չումն ըստ և զարունակ ու անուստ ։ Հենց այնպէսն ուներ մասք ուրիշ պահեց հայտ ։ Փախցնեմ։ Յասու ու մայրու ըստ և զարունակ ու անուստ ։ Ինչպէս ուղում ես ։ Եհ, կնանցրդ Հասօն սաղը ընկն ուրախ։ Ասան ու անուստ ։ Եւ բաժակները կրկին պարագուեցան ու անուստ ։ Մի բոպէ անցաւ լուսթեան մէջ։ Ախր դժուար է, և նկատեց Հասօն։ Ի՞նչ դժուար բանն կայ։ Կտիիճ շեմարին ու մի տար։ Ո՞նց թէ չտամի ու չումն ըստ և զարունակ ու անուստ ։ Եհ, եղայր, աղջկեր սիրում է, քեզ պղծաւ ու դնաց։ Արի այս գիշեր փախցնենք ու տանենք հարեւան գիւղը, թթերերի թաղը, այնտեղ կրմնակը մի քանի օր, յետոյ էլ...

— Զէ, չէ, —ընդհատեց նրա խօսքը Հասօն,—փախցնել,
կոտրել նուռիկի անունը նամուսը, չէ, ես չեմ ուզում:
— Ծալեր ձեռներդ ու նայիր, թէ ոնց Սադօն Նուռիկի
տէրը կրդառնայ—և Կարօն հեղնօրէն ծիծաղեց:
— Մի ծիծաղեր, Կարօ, ես ինքս էլ տգիտեմ, ինչ եմ
խօսում, ես տանջվում եմ:—Օղու երրորդ բաժակը նշյնպէս
դարտակ էր արդէն:
— Ինչու եմ ծիծաղում հէր օրհնած, ասում եմ փախցու:
— Զէ, չէ:
— Է՛հ, քո բանն է, ախպէր, ոնց զիտես:
Եւ նորա լուեցին: Հասօն ընկաւ մտաանջութեան մէջ:
Այսօր վաղը նուռիկը կրդառնայ ուրիշի կինը, նուռիկը,
նրա նուռիկը.. Եւ ի՞նչ կարող է անել Հասօն. ոչի՞նչ Սա-
գոն հարուստ է և իշխում է ամենքի վերայ. իսկ Հասօն.
Նա զրոյ է: Բայց ոչ Հասօն կարող է մի կերպ դրատել բանը..
Այ Կարօն խրատ է տալիս փախցնել փախցնել բռնի. ի հար-
կէ նուռիկի անունը կրկոտուի, բայց ի՞նչ արած ախր.. Եւ
Հասօնի հայեացքը ընկաւ դարտակ շիշի վերայ: Նա նայեց
իւր շուրջը, նայեց Կարօյին և յանկարծ նա ինքը և Կա-
րօն, և օղետունը և այդ կիսահարբած հիւրերը և կարգին
դարսած շիշերը սարսափելի զղուելի թուեցին նրան: Նա,
որի օգնութեանը կարելի է, որ կարօտ է նուռիկը, նատած
գինեանում պարապ անց է կացնում իւր ժամերը. ամօթ,
ամօթ... Եւ Հասօն յանկարծ վեր կացաւ տեղից:
— Է՛յ, ուր ես շտապում, կաց, մէկն էլ ես մեծարեմ,—
նկատեց Կարօն:
— Զէ, չէ. զլուխս է ցաւում,—և նա շտապով դուրս
եկաւ օղեանից: Կարօն հետեւ նրան:
— Նորերից են, —նկատեց Գիգօն, —Է՛յ, Ասուատուր, Է՛յ,
սրբազն, էս քո նոր ընծաներն են: Բարով վայելիս:
Եւ նա պինագ ծիծաղեց:
Ամբոխը հրհուց Գիգօյի սրախօսութեանը:

X.

Խոր քնով քնած է Դ. գիւղը:
Գիշերուայ պարզ կապուտակ երկնակամարում հանգիստ
լողում է լուսնեակը և ամեն ինչ բնութեան մէջ ներկում
է մեղմ կաթնազոյն լուսով: Նրա լցոր ընկնում է տների
տափարակ տանիքների վերայ, խաղում է հովիտներում,
ձորերում, լայնածաւալ համարեա մերկ գաշտերում, խա-
ղում է ֆանտաստիկական ստուելներով ծառերի սաղարթ-
ներում, ընկնում է զիւղական խարխուլ եկեղեցու քարաշէն
գմբէթի վերայ և ցոլացնում է նրան պսպղուն փայլերով:
Երբեմն երբեմն միայն գիշերուայ լուսութեան մէջ լսվում
է քնաթաթախ շների հատուկտիր հաջոյը և աքաղաղների
երկարատև ձայնը: Գիւղի մօտակայ լճակրում անընդհատ
կռնջում են գորտերը զեփիւոը մեղմ հոսանքով անցնում
է լճակի վերայով և շշյում է նրա հանգիստ, խաղաղ մա-
կերեցթը. կանաչ եղէցնի միջից յանկարծ թռչում է զարթ-
նած վայրնի բաղը և իւր թևերի շվշլոյվ ընդհատում
է զիշերուայ խոր լուսութիւնը:
Այն նեղ զառիվայր փողոցով, ուր ապրում էր Հասօն,
գնում է մի մարդ. նա զիտամամբ անցնում է այնպիսի տե-
ղերով, ուր չէ ընկել լուսնի լցոր. նա գնում է պատերի
մօտով և թաղնվում է ստուերում. նա ստէկ ստէպ կանդ
է առնում և յետ նայում. այդ մարդը—Հասօն է:
Նա մօտենում է մի տան պատշգամբի և երկար սուլում
է: Նա բարձրանում է պատի վերայ, զգոյշ զիտում է իւր
շուրջը և իջնում է բալը. նա կանդ է առնում պատի ստուե-
րի մէջ և կրկնն սուլում է. տան փոքրիկ դուռը որ նա-
յում է զէպի բակը, կամաց բացվում է և այնտեղից դուրս
է զալիս մի մարդ, փաթաթուած սպիտակ շորերով. դա
նուռիկն է:
— Հասօն դու ես, —լսվում է նրա շոյը:

— Նուռիկ, —միայն պատասխանում է Հասօն:
 — Ինչու ուշացար, կարծեցի, թէ չես դալու:
 — Ես, չգամ. ինչե՞ր ես ասում, Նուռիկ:
 Եւ Հասօն մօտեցրեց իրեն Նուռիկին և սկսեց շշյել նրա
 արձակուած մազերը:
 — Ուրեմն դու... դու մարդու ես զնում: Եյլ Արձա
 — Զէ, Հասօ, ինձ տալիս են... զօռօվ: Ասո բաղադրաս
 — Ասա, որ չես ուզում նրան:
 — Ո՞ւմ ես ասում, էլ լսող չկայ: Անոր
 Եւ Նուռիկը տիրագին կոացրեց իւր գլուխը. նրա խիտ
 մազերը իրեւ օձիկներ փաթաթեցին նրա մերկ պարանոցը
 և մարմարոնեայ կուրծքը:
 — Իսկ մայրդ, —հարցրեց Հասօն:
 — Է՛հո, —հառաջեց Նուռիկը, —նա հօրս բերնից է խօ-
 սում. նա վախեցաւ, երբ ասացի, թէ քեզ եմ ուզում:
 — Ուզում են բաժանել էլի մեզ:
 Նուռիկը ոչինչ չպատասխանեց: Բայց առաջ առաջ բարձր
 բակում հաջեց շունը:
 Նուռիկը վախեցած նայեց յետ:
 Բակում ոչ ոք չկար:

Նոքա քաշուեցան պատի տակ:
 — Քո մարդը Սագօն է լինելու էլի, —կրկին հարցրեց
 Հասօն: Նուռիկը կրկին մնաց լուս:
 — Բայց կրգաս ինձ հետ:
 — Ինչպէս, փախչե՞ր...
 — Հա, զիւղի ծայրում Կարօն սպասում է մեզ. կրգաս,
 ասաւ: Նուռիկը կարծես մունջ լիներ: Այդ լուպէին նա գտնու-
 վում էր տարակուսանքի մէջ, երկու հակառակ ուժեր մըցում
 էին միմեանց հետ. մէկը ասում էր — զնա՞ քո ընտրածիդ,
 այնտեղ է զրախտ, երջանկութիւն, սէր և բաղդ. իսկ միւսը
 անդադար փախսում էր — փախչե՞լ հայրական օջախից, մաս-
 խարայ լինել, մի մատ մեղը դառնալ խալիս բերնում...

Ինչպէս կրնայեմ յետոյ խալիս աչքին... Իսկ ձնողքդ.. նո-
 քա կրմեռնեն վշաից և ամօթից.. դու, որին այդպէս սիրում
 են նոքա, մի՞թէ դու ապերախտ կրգանուես նոյա առաջ:
 Զէ, չէ. իսկ եթէ սիրում են, ապա ինչո՞ւ, ինչու տալիս են
 քեզ այդ Սագօին, —սկսում էր կրկին խօսել առաջին ձայնը
 և խեղճ՝ Նուռիկը երկրայում էր:
 — Ասա, Համաձայն ես:
 — Ո՞ւր է՛րթանք:
 — Ո՞ւր. Խաղանը զիւղի թրքերի մօտ, այնտեղ ես ինձ
 բարեկամներ ունեմ, մեղ կրպաշեն:
 Նուռիկը ընկաւ մատանջութեան մէջ:
 — Զէ, Հասօ, ես չեմ փախչել իմ նամուսս թանգ է ինձ
 համար:
 — Զես ուզում էլի, —հարցրեց Հեղմորէն Հասօն:
 Այդ ձայնը սթափիցը Նուռիկին:
 — Զէ, զողիս յօժար է, Հասօ, բայց.. ես չեմ կարող:
 — Է՛հ, լաւ, լաւ. մնաս բարեւ, Նուռիկ, մենք էլ չենք
 տեսնուիլ:
 — Ինչո՞ւ, դու զնում ես:
 — Հա, գնում եմ հայրենիք:
 Նուռիկը լոեց: Այդ լուպէին նրա հոգեկան պատերազմը
 վերջացաւ. այն զապող, խելքի ու մնքի ձայնը լոել էր,
 խօսում էին միայն կիլքն ու զդացմունքը:
 Հասօն կամաց հեռանում էր նրանից: Նա շտուեց
 անգամ իւր վերջին հրաժարականը. նա իրեն խարուած,
 անպատուած էր համարում: Եւ ով էր խարողը. նրա Նու-
 ռիկը, նրա սիրելի Նուռիկը:
 — Հասօ, կաց, Հասօ, —աղերսագին կոչեց Նուռիկը:
 — Էլ ի՞նչ ամեն բան վերջացաւ, —նկատեց նա դառ-
 նազին:
 — Մնաս բարեաւ:
 Եւ Նուռիկի ձեռները փաթաթուեցին Հասօյի վզով:

— Հասօ, իմ անդին, իմ աչքի լոյս Հասօ...
 — Թող գնամ. Կարօն սպասում է:
 — Գնամ, չէ, չէ, Հասօ. ինձ ել տար, գալիս եմ, —
 շնչեց նուռիկը ուժասպառ:
 — Ի՞նչ նուռիկի դու գալիս ես հետս:
 Նուռիկը խկոյն շպատասխանեց:
 — Զէ, չէ, գնա, Հասօ, գնա մենակ, — մըթմիթաց նա
 մի բոպէից:
 Եւ Հասօն դանդաղ հեռացաւ:
 Նուռիկը մնաց կանգնած սօսենու տակ. նա անզօր յեն-
 ուեցաւ ծառին և սկսեց խաչակնքել հեռացող Հասօյին:
 Այդ բոպէին մի միտք ծագեցաւ նրա ուղեղում.
 Իսկ եթէ, եթէ նա գնում է իրան սպանելու: — Հասօ,
 Հասօ, — բացականչեց նա:
 Իսկ Հասօն հեռու էր: Նա լսեց նուռիկի ձայնը, բայց
 յետ չնայեց:
 — Հասօ, Հասօ...

Իսկ Հասօն արդէն ցանկի վերայ էր: Նա այնտեղց տեսաւ
 վերջին անդամ իւր նուռիկին, ծանր կերպով ախ քաշեց և
 արտասուբքի երկու կաթիլ ցոլացին այդ հսկայի աչքերում:
 Հասօն լախ էր. նա ողբում էր իւր երջանիկ անցեալը, իւր
 ոսկի երազնիրը: Նա իջաւ ցանկից փողոց: Այնտեղ Կարօն
 սպասում էր, նստած մի ձիու վերայ և միւսի սանձը բռնած:
 Հասօն լուռ հեծաւ ձին և ուժգին մտրակից նրան, կար-
 ծես, մեղաւորը անխօս կենդանին լինէր:
 — Ի՞նչ է, չեկա՞ւ, — հալցրեց Կակօն:
 Հասօն ոչինչ շպատասխանեց: Նա կրկին մտրակից ձիուն
 և անհետացաւ գիշերուայ մթութեան մէջ:
 Կարօն հետեւեց նրան:

XI.

Ամբողջ Դ. գիւղը գտնվում էր մի անսովոր շարժողու-
 թեան մէջ. ամեն տեղ նկատվում էր մի տեսակ իրարան-
 ցումն և ժիր կեանք: Եկեղեցու զանդակները ուրախ ուրախ
 հնչում էին և պատրապի հրաւիրում նրանց ձայնը գիւղեց
 շատ հեռու էր տարածվում: Ամենքը գիւղում պատրաստ-
 վում էին մի ինչ որ հանդէսի զարադջի Ասուատուրը վա-
 ղուց բացել էր իւր կրպակ-շերախանան և բարձում էր
 սայլի վերայ մի տիկ օղի:
 — Շնորհաւոր ընի, բաղդաւոր լինեն, աղա, — նկատեց
 նա, ցածր զլուխ տալով:
 Ասուատուրի առաջը կանգնածը ինքը ուէն էր:
 Արբած Գիգօն նշյալէս այդտեղ էր: Նա քձնելով հետ-
 ևում էր ուէսին:
 — Աղա-ջան, բարի սհամեի:
 Ուէսը շպատեց գետին մի արծաթ փող:
 — Ծերօն, տար տուն օղին, ես կրգնամ եկեղեցի, շու-
 տով կրսկառի, — նկատեց ուէսը:
 Եւ իրաւ, ժողովուրդը խումբ խումբ դիմում էր եկեղեցի.
 կանայք, նորահարսներ, տղայ և աղջիկ, — այդ ամենքը
 ցանկանում էին ներկայ լինել նուռիկի պատրաստութեան
 հանդիսին:
 Ահա հեռուից երեւեց և հարսանեաց յուղարկաւորու-
 թիւնը: Առաջից գնում էին զուռնաշները, նրանց հետեւում
 էր մի խումբ երիտասարդներ, յետոյ հարսն ու փեսան,
 շրջապատուած ստուար ամբոխով և յուղարկաւորութեան
 վերջում հարիւրաւոր մեծ ու փոքրիկ երկխաներ, որոնց
 ճիշը և հրհոցը ծածկում էր ամեն ինչ: Առաջաւորները
 անդադար հրացան ու ատրճանակ էին արձակում:
 Հրապարակում, եկեղեցու մօտ, սպասում էր ծերունի-
 ների հետ նորապսակներին կնքահայրը:

Նանդէսը մօտեցաւ եկեղեցու բակին:

Փեսայ-Սագօն, ըստ երևշյթին, ուրախ էր. լայն ժպիտը փոռուել էր նրա խւզակի երեսին և աւելի ես այլանդակում էր այդ տգեղ երեսը:
Նուռիկի դէքը անդայն էր. նա ցած էր թողել իւր սե, զլորակ, արտասուքից կարմրած աչքերը և դանդաղ համարեա մէքենայաբար շարժվում էր ամբոխի միջով։ Երեմն երբեմն միայն նա վախով, անհանդիստ նայում էր դէս ու դէն և կըկին տիսուր կոայնում իւր գլուխը։ Երեսում էր, որ նրա շօջմուեկ հայեացը որոնում էր մէկին ամբոխի մէջ։ Իսկ այդ մէկը, Հասօն, շկար։ Նա չէր գիշերել անդամ Դ. զիւղում։ Նա և Կարօն քշել էին իրենց ձիերը մօտակայ թրքաբնակ զիւղը, մի ժամ մնայել էին այնտեղև լուսաբային մտել էին անտառ։

— Նանդէսը դանդաղ մտաւ եկեղեցի։ Այս չէր գիշերել անդամ Դ.
Տէր Պօղոսը փառաւոր զգիստաւորուած սկսեց պսակը։

Դ. զիւղում վաղուց գոյութիւն ունէր մի հինաւուրց սովորութիւն։ Նորապսակները եկեղեցուց ուղղակի գնում էին մօտակայ Խաչքարը, որ գտնվում էր անտառի սկզբում և այնտեղ վեսան ժողովրդի առաջ մատաղ էր անում։

Ինքը Խաչքարը, որ մի սպիտակ, սրբատաշ և արդէն մաշուած տառագրութիւններով խաչաձև քար էր, գտնվում էր քարանձաւի մէջ, որի վերին մասը, առաստաղը, ուղղակի բարձրանալով գէպի վեր, կազմում էր մի խոր, մուժ անդունի պատը։ Ոչ ոք չէր մտել այդ անդունիք։

Գիւղում պատմում էին, որ գիշերները այնտեղից գուրս են գալիս երեք ուրուական և շօջում անտառում։ Աւանդութիւնը աւելացնում էր, որ այդ երեք մեռած թուրքեղարց հոգիներ են, որոնք սպանել են միմեանց մի կնոջ համար։ Սյդ անդունի մօտ էր և Խաչքարը։ Անտառը պատեղ աւելի խիտ էր և համարեա անսնցանելի։ Հսկայա-

կան, դարեւոր ծառերը մօտ կուտակուել էին և վայրի բաղեղը պատել էր նըսնց արմասն ու Ճիւղերը։ Պակից յիշ տոյ հանդէսը սովորութեան համեմատ եկաւ Խաչքարի մօտ։

Սագօն հանեց իւր խանչալը, կոացաւ և սկսեց մորթել դասուն։ Սյդ բոպէին քարանձաւի վկրեսում երենցաւ մի ճիաւոր։ սե նժոյգը անհանդիստ խաղում էր նրա տակին։ Ոչ ոք չնկատեց նրան։ Զիաւորի երեսը կիսով չափ ծածկած էր սե եակնջու ծայրով։ Նա մօտեցաւ քարանձաւի մուտքին։ Նրա աւաջ կատարվում էր զոհաբեկութիւնը և նրա ուների տակ կոացել էր փեսան։ Սև ձին յանկարծ խրխնջաց։

Ամբոխը նայեց գէպի վեր։

— Սագօն, —որուաց անտառում ճիաւորի ձայնը, — Սագօն, գու խլեցիր ինձանից իմ ուղածը, իմ նուռիկիս.. Այս, ստացիր փոխարէնը։ Զիաւորը բարձրացրեց հրացանը, արձակեց, և Սագօն խուլ հառաչանքով գլուխուեց գետնին։ Ամբոխը մնաց շուարած, քարացած։

Երբ նա ուշքի եկաւ, ճիաւորը անհետացել էր արդէն։ Հեռուից, անտառի խորքից լավում էր նրա ճիու սմբակների տրոփիւնը։ Նրան հիսունում էր մի ուրիշ ճիաւոր, երկուսն էլ հագնուած էին լիոնական քրգերի պէս։

— Փեսան... իեսան... մեռնում է, — ճաց մէկը։

Ամբոխը շարժուեց։

— Զուր, զուր...»

— Ո՞վ էր, ասացէք, ո՞վ էր, — կատաղում էր ուկու։

— Զիաւորներ... բռնեցէք, բռնեցէք...»

— Նորա մտան անտառը, այժմ հնար չկայ։

— Բայց ո՞վ էր ախր, ո՞վ, — գոռում էր տէրը Պօղոսը։

Ամբոխին մօտեցաւ կուզ Պանիկը։

— Նը, տղե՛րք, ի՞նչ կայ, — հարցրեց նա։

— Զտեսամբ, սպանեցին, փեսին սպանեցին։

— Հա, հա, հա, Սագօն... էդպէս էլ արդար դատաստան, — հրշուաց Պանիկը։

Նա հարբած էր: Նրա աչքերը ցոլացին ներքին բաւականութեամբ: Նրան աղքատացնողը, նրա անհաշտ թշնամին իրեւ սառն դիակ փռուած է նրա ոտնելի տակ: — Նեռացրէք դրան, — գոռաց ոէսը: Դանիէլն հեռացրին: — Բայց ով էր այդ ձիաւորը, — հազար ու մէկ անգամ հարցնում էր ամբոխը:

Ոչ ոք չէր ճանաչել սպանողին: — Քրդերը կամ թքերը կը լինեն, — նկատեց մէկը: — Քրդեր... հա... հա... հա... էդ խելօքին տեսէք, — ծիծաղից կուղ Դանիէլը, նորից մօտենալով ամբոխին, — Հասօն է սպանողը, Էյ, խելօք Դաւիթներ, Հասօն... — Հասօն, — կրկնեց ղարսացած ամբոխը: — Հա, Հասօն, հովիւ Հասօն, — շարունակեց Դանիէլը: — Բաս, նրա ձեռքին մատաղ, բաս ինչո՞ւ խլեց ուրիշ ուղածը... այ շանսատակ, — և նա թքեց մեռածի երեսին:

Նուռիկը այդ միջոցին ուշաթափուել էր զարհուրելի տեսարանից: Կամաց կամաց, ամբոխը ցրուեց: Սագոյի դիակը բարձեցին ձիու վերայ և տարին դիւդ: — Այ անիծած է այս տեղը... Բաս մեր պապերը սուտ էին ասում, — նկատեց թքելով իրկը անգամ և շուտ խաչակիքելով իւր երեսը մի պառաւ կին, եւ նա ոսկրուտ ձեռով ցոյց տուեց անդնդի կողմը: Տէր Պօղոսը գեռ մնայել էր կանգնած սպանութեան տեղում: Նա մնուացել էր անգամ հանել իւր շուրջառը:

Տատանուելով մօտեցաւ նրան կուղ Դանիէլը և սաաց: — Էյ, աէրտէր-ջան, շուրջառդ հիմի շուռ տուր, մեռել ունես, շտահդ պինդ պահիր, էլ վաշխառու Սագօն չկայ: Խեղձ Դանիէլը խմում է նրա հոգուն, որ շուտով գեհենին արժանանայ ու սատանայի փայ դառնայ.. Էյ, Սագօ, Սագօ, Հը, զրկեցիր ինձ, տես, քեզ էլ շանսատակ արին, օխայ, անունիդ մեռնեմ, Հասօ-ջան, էդքան էլ արդար դատաստան:

Եւ Դանիէլը սաստեց օդում՝ իւր գողացող ձեռովիվ: Վերջապէս տէր Պօղոսն էլ թողեց քարանձաւը և հեռացաւ: Այնտեղ մնաց միայն կուղ Դանիէլը և սկսեց անկապ խօսել զրհուալ: Նա ուրախ էր. Սագօն մեռած էր, սպանուած էր: Քարանձաւի յատակի վերայ նշմարվում էին արեան բծեր. այդտեղ ընկած էր և նուռիկի կրծքից մի սպիտակ ծաղեկ արեան կաթիլը թրջել էր այդ ծաղկի թիրթիկները:

Սնցան տարիներ:

Հասօն էլ չերեւաց Ղ. զիւղում: Այդ օրից ոչ ոք չէր տեսել նրան: Նուռիկը մի տարուց զնաց մարդու. նա այժմն ընտանիքի մայր է, ունի զաւակներ և երջանիկ է: Երբեմն երեմն նա յիշում է իւր անցեալը. նա զիտէ, որ Սագօյին սպանողներ Հասօն և Կարօն էին, նա պատմումէ այդ անցքը, իրեւ հեքիաթ, իւր փոքրիկ երեխաններին:

Հասօի մայրը կարողացաւ տանել իւր կակիծին: Հասօն կորաւ և այն վերջին կապը, որ կապում էր իսեղձ Ոսկեհատին կեանքի հետ, կտրուեց:

Էլ ի՞նչի համար էր ապլում պառաւ Ոսկեհատը: Նա մեռաւ....

XII.

Նզւ—քիսի դաշտավայրի անկիւնում, որ կազմում է թրքաստանի սահմանակից նահանգներից մէկը, գտնվում էին մի հին ամրոցի աւերակներ: Այդ ամրոցը շինած է սարի գլխին և շրջապատուած խիտ, դարեւոր անտառով, որի միջից երևում է միայն մղկիթի երկար, կարծես, օդեղէն աշտարակը: Այդ աւերակները իրենց ամայի տեսքով սարսափ էին ձգում, հազուազիւտ ճանապարհորդի վերայ: Ժողովուրդը մութ, ու զըներով էր ներկում այդ ամայի ամրոցի անցեալի տխուր պատմութիւնը. զարհուրելի ոճրագործութիւնների տեսարան էր եղած այդ ամրոցը. արիւնը սրսկել էր նրա սրբա-

տաշքարիչ պատերը և յատակը: Այժմն այդ ամրոցը թռղած է: ոչ ոք չէ բնակվում նրանում, ժամանակով գեղեցիկ պատերը քանդուել են, փուլ են եկել և կամարակապ անցքերի սիւները փշուել են: իսկ վայրի կանաչը և տատասկոտ մացառները առատ բռնել են ամրոցի խարիսուլ աւերակներում, և բաղեղը կպչելով մամռապատ պատերին բարձրանում է դէպի վեր:

Ամրոցի ամայի և լայնարձակ սրահներում և անցքերում տիրում է մի ազօտ լոյս, որ հեռաւոր անկիւններում փոխվում է լիակատար, մթութեան: Գերեղմանական լոռութեան մէջ երեմն-երեմն լավում է բուի անախորժ, երկարատե ձայնը, և նրա աչքերը, իբրև փոսփորային կրակներ, ցողում են մշտական մթութեան մէջ:

Տիսուր ցած են նայում ամրոցի աւերակները իրենց գոռող բարձրութիւնից: Լուսինը բարձանալով երկնակամարում շեշտակի սփռումէ իւր ճառագայթները ամրոցի գլխաւորի մուտքի մէջ և շարժուն, ֆանտաստիկական ստուրներով խաղում է խոնաւ, ժամանակից կանաչած, բորբոնած պատերի վերայ: Կէս գիշեր է:

Դաշտային լոռութեան մէջ յայնի լավում է ձիան սմբակների տրոփիւնը. ձին վազում է դէպի ամրոցը: Աշա բլրի եաւեց երեւեց մի ձիաւոր. նա շատապով ուղղեորուեցաւ դէպի ամրոցի գլխաւոր մուտքը, իջաւ ձիուց և, կապելով նորան մօտակայ ծառից, հաստատ քայլերով ներս մտաւ: Երեսում էր, որ ամայի ամրոցը լաւ ծանօթ էր նրան. նա վառեց պատի արանքում դրած ձրագը. իսկ վախեցած բուն ծանր շարժելով իւր թւերը թռչում է կիսաքանդ սինից և հռանում մութ անկիւնը:

— Ոչինչ այսօր լաւ կը ճաշենք, որսը վատ չէր, — նկատեց ինքն իրեն նորեկը և, հանելով իւր երկար և եավինջն, փուեց գետնին, մի կողմ դրեց հրացանը և սկսեց հաւաքել ծառի չորացած ձիւղերը: Երիտասարդի հագուստը քրդական էր:

— Այսօր նա ուրախ կը լինի, ինքը գեռ չգիտէ, որ որսը մեր ձեռքումն է, — նկատեց նա մի քանի բոպէց և վառեց խալոցիը:

Նրեղէն բոցը սկսեց լափել ծառի ըոր ծղնօտները. նա լիզում է սկայած ոստերը, ձրթճոթացնում է և թողնելով ամեն կողմ ցայտող կայծեր՝ երկար, սրածայր լեզուներով բարձանում է դէպի վեր: Խարոցի լոյսը երերուն ստուելներով խաղում է ամայի ամրոցի պատերի վերայ և ներկում է նրանց մի կարմիր, բոցավառ գոյնով:

— Ինչու են ուշանում մերոնք, — հարցրեց ինքն իրեն երիտասարդը և մօտեցաւ ամրոցի մուտքին:

— Նա էլ դեռ չկայ, — աւելացրեց նա:

Յանկարծ գիշերուայ լոռութեան մէջ լսուեցաւ բուփ անախորժ ձայնը: Երիտասարդը մտիկ տուեց և մի լոպէց պատասխանեց սուլելով: Նեռուուում նշանարուեցան մի քանի ստուելներ և ամրոցի մուտքին մօտեցան մօտ քսան ձիաւոր: Նոքա լուռ ու մունջ իջան ձիերից, մտան ամրոցի ներքին յարկը: Նոցա հետ կային երկու ձի և ոտները կապկապած մարդիկ, դոքա քրդեր էին:

— Ո՞ւր է նա, — հարցրեց խմբի միջից մէկը:

— Դեռ չէ եկել. երեկուանից չեմ տեսել նրան, — պատասխանեց նա, որ եկել էր ամենից առաջ:

Խօսում էին հայերէն:

Նորեկներից ամեն մէկը հագնուած էր իբրև լեռնական քուրդ և ոտից մինչ և գլուխ զինուած էր:

— Հակեցէք սրանց, թող ինքը գայ և յետոյ արդէն...

Խօսողը զլեթացրեց իւր խօսքը և մօտենալով խարոցին սկսեց տաքացնելիւր ձեռները: Նա կը լինէր մօտ 28 կամ 30 տարեկան, բարձրահասակ, սեամորթ և ուժեղ: Երեւում էր, որ նա իւր կեանքը անց է կացրել բնութեան ծոյրում նրա արեւառ երեար, մեծ, սև, կոշտ ձեռները ցցյ էին տալիս, որ նա ծանօթ է ֆիղեքական դժուար աշխատանքին, — այդ երի-

տասարդը մեզ ծանօթ Կարօն էր: Այն օրից, երբ Հասօն սպանեց Սագոյին Խաչքարի մօտ և անհետացաւ Դ. գիւղից, այն օրից Կարօն միշտ հետևել էր նրան:

— Լաւ հսկեցէք դրանց, — կրկնեց իւր պատուէրը Կարօն և ինքը փռուելով գետնին, սկսեց դիտել խարոյկի բոցի վաղ վզող սառւերները:

Խումբը լուռ շարուեցաւ օթևանի անկիւններում և վրա-փառում էին: Մի քանի րոպէից ամրոցի գլխաւոր մուտքում երեկո մի մարդ, հրացանը ուսին նա դանդաղ մտաւ օթևա-նը: Խումբը վեր կացաւ տեղից և զրուխ տուեց նրան. իսկ նորելը, կարծես, չնկատեց այդ: Նա գլխակոր, մի ծանր մտա-տանջութեան մեջ անցաւ խմբի առաջով և անհետացաւ ամրոցի հեռաւոր մութ անցքերից մէկում:

— Նա տխուր է, — փսփսաց մէկը:

— Ոչինչ, կ'ուրախացնենք, — պատասխանեց Կարօն և վեր կնալով հետևեց նորելին:

Մի րոպէից նոքա վերադարձան մեծ սրահը:

— Ի՞նչ ես ասում, Կարօ, Ի՞րբ և ուր, — հարցրեց նորելը վրդովուած և միենցին ժամանակ ներքին բերկութիւնից դողացող ձայնով:

— Այսօր, Ղաղան — լուի մեծ ճանապահում կուը երկար տեսեց, մեզանից երկուսը ընկան:

— Ո՞վ:

— Ասլանը և Քոթոթը:

— Իսկ ուր է նա:

— Ահա, — և Կարօն ցոյց տուեց կաշկանդուածների վե-րայ: Դրանցից մէկին, որ մօտ 60 տարեկան մարդ էր, մօտեց-րին նորելին: Վերջնի աչքերում ցոլաց կատաղի կիրքը:

— Վերջապէս, — մըթմըթաց նա, — թողէք ինձ մե-նակ, — դարձաւ նա խմբին, — Կարօ, դու մինա:

Խումբը ցրուեցաւ: Ամրոցում տիրեց խորին լուռթիւն:

— Ենորհակալ եմ Քեղնից, Աստուած իմ, շնորհակալ

եմ, — և նորելը բարձրացրեց իւր սե, գեղեցիկ աչքերը դէպի երկինք և միաց մի բռպէ անշարժ: Արտասուքի չիթը փայ-լեց նրա աչքերում:

— Բաւական է, Հասօ, բաւական քուրզը տեսնում է:

— Իրաւ է, — նկատեց Հասօն և տուեց իւր դէմքին մի սառն արտայայտութիւն:

Նորելը Հասօն էր, մեր վաղեմի ծանօթ Հասօն: Վերջին տա-րինները նա անց էր կայրել Թըթաստանի լեռնապատ դաշտե-րում և անտառներում: Սագոյի սպանութիւնից յետոյ նա դուրս էր եկել հասարակութիւնից և դարձել էր աւազակա-պետ: Նրա անունը տարածուել էր շրջակայքում: Քրդերին և թղթերին նա սարսափ էր ազգում: Հասան բէյը (այդպէս էին կանցում նրան այստեղ) հարուսաների և երջանիկների ամենաանհաշտ թշնամին էր, իսկ թշուառների և անբաղդ-ների ամենածերմ պաշտպանը:

— Կա՛ր, Կարօ, — դարձաւ նրան Հասօն, — ինձանից խի-ցին իմ սէրը, իմ հօրը, իմ քրոջս: Իսկ մայրս, ողջ է նա... .

Ո՞վ գիտէ, գուցէ դռնէ դուռ ման գալով չոր հաց է մու-րում: Եւ այս մարդը փշեց իմ ընտանիքի կեանքը, նրա շնորհիւ փակուած է անհաւատների հարեմում իմ նոյեմ-գար քոյրս: Նա գեռ չգիտէ, թէ ով իմ ես. ինձ ամենքը կանցում են Հասան-բէյ, իսկ իմ ուկս Մրտօյի որդի լինելս յայտնի է միայն քեզ: Եւ ահա զարկեց իմ ժամը. Աստուած լսեց ինձ, Կարօ: Երբ խումբս յաջող ասպատակութիւնից յետոյ անհոգ ուրախանում էր, երբ երգն ու զինին թագա-ւորում էին նրանց շրջանում, ես հեռանում էի, ես առանձ-նանում էի, ինձ զզուելի էր թւում այդ, ես աղօթում էի, ես խնդրում էի, որ Աստուած լսէ ինձ և նա լսեց: Ես աղ-րում էի այս վերջին տարինները միայն մի նպատակի հա-մար, մի միտք միայն պաշտիկ էր իմ ուղեղը, իմ ամբողջ գոյութիւնը: Ծերտնի մօրս խօսքելը խորը դրոշմուել էին սրտում. ես վրէժ էի փափազում, ես արիւն էի ուղում

արեան փոխարէն և ես Հասայ նպատակիս: Ես պարտական եմ քեզ այդ, Կարօ, այսօր, միայն այսօր ես երջանիկ եմ: Այդ մարդը ձեռում է, նա ինձ է պատկանում, միայն ինձ: Եւ Հասօյի աչքերը ցոլացին մի վատ, վայրի կրակով:

— Քակի՞ր դրան:

Մի բոպէից ծերունի քուրդը կանգնած էր աւազակապետի տուած:

— Միրզա-բէյ, ձանաշըւմ ես ինձ:

— Ես.. ոչ.. լսած եմ, թէ դու Հասան բէյն, ես:

— Հա, այսաեղ ինձ այդպէս են կանչում: իսկ իմ առունս Հասօ է:

— Ոու հայ ես, ուրիմն, —մի արհամարհական ձայնով նկատեց ծերունի քուրդը և հեղափան ժամարը խաղաց նրա խորշմած երեխն և շրթունքների նեղ ծալքերում:

— Հա, ես հայ եմ, քուրդ, և քո բարեկասի որդին:

— Հայերը իմ բարեկամն չեն, —նկատեց ծերունին:

— Զէ, մէկը կար, յիշում ես Մրացյին:

Ծերունին դողաց ամբողջ մարմնով:

— Մրացյի, Հ—շէն զիւղի ուկա՞ն:

— Հա, որին դու սպանեցիս, քուրդ, անիծուած...

Վերջինը լուռ էր, ոչ մի խօսք, ոչ մի շարժուածք. նա Հասկացաւ, որ իւր օրհասական ժամը Հասիլ է, և նա սառնասիրա գնում էր դէպի մահ:

— Ձանաշեցի՞ր այժմ, Միրզա-բէյ, —ծիծաղերով ասաց Հասօն:

Ծերունի քուրդը կրկին լուռ մնաց:

— Խօսիր, խօսիր, անիծուած, — աղազակեց Հասօն: — Խօսիր, մտարերում ես Մրացյին, Նյեմկարի՞ն, ուր է նա, ասա, ասա, անհաւատ շնչն:

— Փառք Սլաշին, —միայն արտասանեց քուրդը:

Եւ մի քանի հարուած իջան ծերունու ալեզարդ դիմին, նրա «չալման» քակուեց և արծաթափայլ մաղերը լնկան ուսկընին:

— Աստուած իմ, ահա նա ձեռումս է, և իմ ներքին կրակս կրկին լափում է ինձ, կրկին ես ըսնեմ բաւականութիւն: անիծուած կետնը: Նուռիկի, Նուռիկի, այս բոլորը դու արիր, Նուռիկի: — Եւ Հասօն ծածկեց ձեռներով իւր երեսը և հեռացաւ ամրոցի մութ անկիւնը:

Կրկին ամրոցում տիրեց խորին լռութիւն: Կարօն խաչած իւր ձեռները յինուեկ էր պատին և գիտում Միրզաբէյին: Խարցյիլի աղօտ լցոր սփուլում էր միայն իւր շուրջը, և կիսամութ ստուերը սփողել էր ամրոցի ներքնատունը: Կարօն բերեց փայտ և նորից վառեց մարող խարցյիլ:

— Բայց նո պիտի մեռնի, —նկատեց Ճնշուած ձայնով Հասօն և մօաեցաւ Կարոյին: — Կարօ, — շարունակեց նա վճռողաբր — այսօր լուսաբացին ես կրմողնեմ ձեզ և կրհեռնամ: Թէ ուր կրգնամ, ես չեմ կարող ասել... Այս օրից ես ձեր աւագակապեար չեմ: աւագակ էի ես առաջ.. ով զիտէ... Ոսկին չէր ինձ հրապուրողը, ես հեռանում եմ ձեզանից համարեա աղքատու... Դուք կարող եք շարունակել ձեր ասպատակութիւնները և կամ հաշտուելով հասարակութեան հետ անցնել Հայաստան — այդ ձեր գործն է....

— Բայց ուր ես զնում, Հասօ:

— Ուր, — զիտամ: մի հարցնիր ինձ, իմ կեանքս ատելի է ինձ, ես, կարծես, անիծուած լինիմ, ես ոչ մի տեղ հանդիսաւ ըսնիմս...

— Հասօ, ինչեր ես խօսում:

— Իմ խօսքս խօսք է, Կարօ, վաղը ես կըքաժանուեմ ձեզանից, դու կըլինես խորի առաջնորդը: Պաշտպանիր թոյլին, հարատահարուածին, կոտորիր, անխնայ կոտորիր հարատահարողին... Հայերին ձեռք ըստաք...

— Զէ, Հասօ, ես կրգնամ քեզ հետ, — աղաչց Կարօն:

— Պէտք չէ. վաղը դու ինձ արդէն չես տեսնիլ: իսկ այժմ թող ինձ մենակ և զնամ, յայտնիր խմբին իմ հրամանա:

Կարօն մնացել էր անշարժ:

— Գնա, ևս հրամայում եմքեզ, — դոռաց Հասօն, — ևս
դեռ ձեզ իշխանն եմ... դժուկաւ:

Եւ Կարօն գլուխ տուեց Հասօյին և դուրս եկաւ ամրոցից:
Հասօն մօտեցաւ Միրզա-բէյին:

— Դու այս ըսպէիս մեռնելու ես, եթէ ուզում ես
ապրել ասա, ասա, ուր է քոյրս, ողջ է նա:

— Թողլինի Ալլահի կամքը, մեծ է նրա զօրութիւնը,
գեառւր:

— Թողլինի ուրեմն, — որոտաց Հասօյի ձայնը և նրա
ատրճանակի գնտակը կպաւ Միրզա-բէյի գանգին:

Արիւնը սրսկուեց Հասօյի շորերի վերայ: Խուլ, խուպոտ
չեծլուսանքով փոռուեց զետնին անշնչացած Միրզա-բէյը:

Հասօն գլխակոր, ատրճանակը ձեռին, կանգնած էր իւր
տեղում և դիտում մեռնողի երեսը: Դրսում սկսում էր
ըւսանալ:

Խարոյկը մարել էր և ամրոցում տիրում էր խաւարը:
Երկար նայեց Հասօն Միրզա-բէյի սրուած, սառած երեսին,
ուր մաշը գլու էր արդէն իւր ինիքը և դանդաղ երերելով,
հեռացաւ դիակից: Ոչ ոք չտեսաւ, թէ ինչպէս նա դուրս
եկաւ ամրոցից և մօտաւ մօտակայ անտառը:

Այդ օրից Հասօն կորաւ...

Գ. ԶՈՒԲԸ.Բ.



ԳԻՆԻ Ե ՅՕ ԿՈՊԵԿ.

428

2r.

00744222

2013



